Մեռնում է հայդուկը իր փայփայած գործի կէս ճանապարհին։ Նրա դիակը բերում և թաղում են Վանում, ուր նա մի քանի ամիս առաջ կամաւորական խըմբերի հետ ներս էր մտել ժըպտադէմ, նորանոր յոյսերով։

Գրիգոր Աղաջանեան աւարտել էր ճեմարանի լսարանական բաժինը։ Նա երկար ժամանակ ապրում էր Բագւում և աշխատում տեղական աշխատաւորների մէջ։ Նա Բագւի աշխատաւորութեան ամենասիրելի դէմքերից մէկն էր...

Բագւի գաղթականական կոմի-



տէի կողմից, որպէս լիազօր գնում է Արարատեան երկիրը թափւած և անօգնական հայ գաղթականների օգնութեան գործը կազմակերպելու համար։

Այդտեղ, պարտքի ճանապարհին նա վարակւում է տիֆով, նրան հիւանդ բերում են Թիֆլիս Արամեան հիւանդանոցը, ուր սեպտեմբերի 8-ին նա մեռնում է իր մօր և ընկերների ներկայութեամբ։ Թիֆլիսից նրա մարմինը տեղափոխում են Բագու, և թաղում են։

Անկեղծ գործչի, պարտքի մարդու մահը ցնցում է բոլորին և ամենքը զգում են կորուստի մեծութիւնը։

—

Սաթենիկ Օհանջանեան ծնւել է Ախալքալաքում. սովորել է Թիֆլիսի գիմնազիոնում, ապա

1906—8 թ. Մոսկւայում՝ մանկավարժական կուրսերում։ Նա 17 տարեկան հասակում բանտ է նետուել իր հայրենիքում. Նա իր կեանքը կապել էր մեր իրականութեան մէջ այնքան հմայք ունեցող քաղաքական կուսակցութեան հետ, և մինչև վերջին օրը հաւատարիմ աշխատել է այդ կազմակերպութեան ընդգրկած ճանապարհի վրայ և միշտ էլ բարձր է պահել նրա բարոյական դաւանանքների ու հաւատամքների դրօշը... Եղել է Պոլսում, Ադանայում, Բուլղարիայում, Թիֆլիսում, Վանում, ամեն տեղ, ուր նա երևացել է, թէկուզ ամենակարճ ժամանակով սկսել է աշխատել և մի նոր բեղմնաւոր գործ ստեղծել։ Պոլսում վարկ է տուել «Աշխատանքի տան» գործունէութեանը, համախմբելով



իր շուրջը բազմաթիւ կանանց, որոնք ամենայն սիրով շարունակում էին նրա սկսածը։ Ադանայում նա խնամում էր հայ որբերին, որոնք կորցրել էին իրենց ծնողներին, հարազատներին։ Նա վերջին ժամանակներս աշխատում էր Թիֆլիսում, «Մեղու» ընկերութիւնը իր գոյութեամբ շատ բան օր. Սաթենիկին է պարտական։ Վանի նահանջի ժամանակ գնում է Երևան օգնելու և խնամելու հայ որբերին. այդտեղ վարակւում է նա տիֆ հիւանդութեամբ և նրան բերում են Թիֆլիս, Արամեան հիւանդանոցը, ուր հոկտեմբերի 1-ին մեռնում է։

Սաթենիկին թաղում են խուռը բազմութեան ներկայութեամբ Խոջիվանքի գերեզմանատանը, Սիմէօն Ջաւարեանի կողքին։

Ծաթենիկի մահը մեծ կորուստ է թէ ժողովրդի, թէ հայ կանանց ու որբերի և թէ միաժամանակ նրա ընկերների համար։

Սա դեռ այստեղ Կովկասում, իսկ սահմանի այն կողմ, Թիւրքիայում ինչ հսկայական կորուստներ, թանկագին կեանքեր ենք կորցրել, որոնց մանրամասնութիւններ դեռ չեն ճշտուած, այդ թողնում ենք ապագային...



## ՀԱԼԱԾՒԱԾՆԵՐԸ

(Նուէր հայ գաղթականներին)

—:—

Անցնում են... անցնում—լուռ, կորաքամակ,
Արցունքն աչքերին, ա՜խ, մերկ ու վտիտ,
Հայացքը այրող, դէմքը դժընդակ,
Ժպիտը թունոտ, զգացմունքը բիրտը։

Ու հազարաւոր... անցնում են .. անցնում
Ինչպէս փրփուրը վազող ջրերի.
Բայց թէ ո՞րտեղից եւ ո՞ւր են գնում...
Ո՜հ, այդ հոգը չէ—անհոգ մարդերի

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կըտեսնի

## ԱՐԱԲԱԿԱՆ ՎԷՊԵՐԻ ՀՌՉԱԿԱՒՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

# „ՀԱԶԱՐ ԵՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ“

Ա. Ճատոր

Ամբողջ գործը բաղկացած է վեց հատորից որոնք լոյս կըտեսնեն մէկը միւսից յետոյ։

«Հազար եւ մէկ գիշերներ» իր հետաքրքրականութեամբ գերազանցում է, մինչև օրս լոյս տեսած հայերէն բոլոր վէպերից և պատմուածքներից։

«Հազար եւ մէկ գիշերներ» թարգմանուած է եւրոպական բոլոր լեզուներով, և ծանօթ է բոլոր ազգերի ընթերցողներին, անցեալներում նա թարգմանուած է նաև հայերէն արեւմտեան բարբառով, որի օրինակները այժմ հազուագիւտ են։



# Ծ Ղ Թ Ա Ն Ե Ր Ը

(Մ. Մաուրինի)

---

Անապատով անցնելիս սուլթանը հանդիպեց նրան։

Աղջիկը սուլթանին դուր եկաւ... Նա անապատի աղջկանը իր հզօր ու յաղթական շղթաների մէջն առաւ։

Նրա սուլթանական հարեմում բացակայում էր հէնց այդպիսի մի աղջիկ։

Անապատի աղջիկը գեղեցիկ չէր, բայց դրա փոխարէն ունէր այնպիսի սիրտ, որից զուրկ էին հարեմի գեղեցիկ տիկնիկները, որոնք այնպէս շուտ յագեցնում էին սուլթանի զգացմունքները...

—Ի՞նչ է քո անունը, ամուր գրկելով աղջկանը, հարցրեց սուլթանը։

—Ցաթմա։

—Քանի տարեկան ես։

—Տասն և հինգ։

—Դու դեռ ոչ ոքի չե՞ս սիրել։

—Օ՜, ո՛չ։ Ես սիրում եմ միայն երկինքը, որը քո աչերի մեջ է արտացոլուած և գիշերը, որը նոյնպէս սև է, ինչպէս և քո մազերը...

—Դիցուհի, եթէ մինչ այժմ ոչ ոքի չես սիրել, ես կամուսնանամ քեզ հետ։

Վերադառնալով պալատ սուլթանը իր ձեռների վրայ բռնած անապատի աղջկան տարաւ իր ննջարանը ու բաց անելով նրա առջև սիրոյ կախարդական աշխարհը՝ աղջկայ սիրոյ հազարաւոր նուրբ և անտեսանելի զգացմունքները դէպ իրեն քաշեց...

Քիչ յետոյ առաջնորդեց հարեմ՝ իր հազարաւոր կանանց նրան ցոյց տալու համար։



—Ո՞վքեր են այս կանայք։ Ո՞ւմ համար են սրանք մետաքսեայ զգեստներով ու թանգագին քարերով զարդարուում... հարցրեց սուլթանին անապատի աղջիկը։

—Սրանք, այս բոլոր կանայք, ինձ են պատկանում, որովհետև ապրում են իմ հողի վրայ, իմ երկրում։

Սրանք միմիայն ինձ դուր գալու համար է, որ հագնւում են այդպէս շքեղ, ինչպէս և բնութիւնը ծաղկում բուրում է միմիայն ինձ համար...

—Ուրեմն քո հոգու մէջ ինձ համար միայն մի փոքրիկ անկիւն է մնում... Օ՜հ այդ դէպքում թոյլ տուր հեռանալ ինձ այստեղից։

Այն սիրոը, որ ես եմ սիրում բարձր է ինչպէս երկինքը, խոր՝ ինչպէս անհուն ծովը, վառ՝ ինչ-

պէս արևի շողերը. այդ սրտի մէջ միմիայն ես պէտք է տեղ ունենամ։

Դու այդպիսի սիրտ չունիս, ինչու ինձ խաբեցիր...

Մնաս բարով... ես գնում եմ...

—Գնա, զայրացած բացականչեց սուլթանը։

Միթէ դու չես տեսնում, որ իմ հարեմի կանայք քեզանից աւելի գեղեցիկ են. մէկ նրանց նայիր։

Տեսնում ե՞ս, նրանց մարմինը փղոսկրից աւելի սպիտակ է, այտերը վարդից թարմ, շուրթերը կեռասից էլ կարմիր, իսկ նրանց ոսկեզօծ մազերը փայլում են արևի ճառագայթների պէս...

Եւ քեզ համար պէտք է այս բոլորը զոհաբերեմ, անմիտ երեխայ...

Ես քեզ հետ ուզում էի ամուսնա-



նալ, որպէս չի սիրուց յագեցած վայրկեաններիս, երբ նստում եմ մենակ բազկաթոռիս վրայ հանգստանալու, զբաղեցնես ինձ և ցրես դէմքիս կուտակւող թախիծը։

—Ինչե՞ր ես ասում... ես քեզ չեմ հասկանում։

—Դու ինձ չե՞ս հասկանում։

Ուրեմն քո խելքի մասին ես սխալ հասկացողութիւն եմ ունեցել։

Լսում էք կանայք,

Այս վայրենի այծեամը, որին ես գտել եմ անապատում, ձեզ, ամենքիդ ցանկանում է փոխարինել և ամբողջապէս տիրել եմ հոգուն...

Ու սուլթանը բարձրաձայն քրքջաց. նրան հետևեցին և հարեմի բազմաթիւ կանայք։

Ֆաթման տեսնելով այդ ամե-

նը լուռ ու դանդաղ սկսեց պալատի սանդուխտներից ցած իջնել պարտէզ։

Արդէն ուշ ու մութ գիշեր էր։

Զնայած դրան, անապատի աղջիկը աշխատում էր շուտափոյթ հեռանալ այդ տեղից, ուր նա կրեց իր կեանքի անդրանիկ վիշտը։

Բայց յանկարծ զգաց, որ հազարաւոր անտեսանելի շղթաներ կապում, մեխում են իրեն սուլթանի քար սրտին և որ ինքը այլ ևս անկարող է դէպ առաջ որ և է քայլ անել…

Հարբածի պէս գետնին ընկնելով Ֆաթման սկսեց բարձրաձայն հեկեկալ և օգնութեան կանչել…

—Ազատեցէք ինձ, ազատեցէք… հանեցէք իմ ձեռներից ու ոտներից շղթաները, որպէս զի կարողանամ փախչել այստեղից



և այլևս ոչ ոքի չսիրել, բացի բարձր երկնքից, անյատակ ծովից և մութ գիշերից։

Բայց նրան ոչ ոք չէր լսում։ Պալատը շրջապատուած էր բարձր պարիսպներով, ու քաղաքում ամենքը քնած էին խաղաղ քնով։

Անապատի աղջկայ հեկեկանքի ձայնը հասաւ պալատի շանը, որին թւաց թէ դա այն ծանօթ մարդու ձայնն է, որը մի ժամանակ ապրել է աշխարհում և մօտենալով՝ ասաց աղջկան։

— Բո շղթաները… ո՞ւր են նրանք։ Ես նրանցից տեսնում եմ միայն մէկը՝ նուիրւածութեան ու հաւատարմութեան շղթան։

Անապատի աղջիկ, այդ շղթան քեզնից պոկել անկարելի է, որովհետև դու ծնւել ես նրա հետ միասին, ինչպէս և մենք՝ շներս։

Հէնց դա ինքն է խանգարում

քեզ հեռանալու այս տան շէմքից՝ ուր դու ճանաչեցիր անդրանիկ սէրը…

Քեզ վիճակուած է այստեղ տանջուել ու մեռնել, ինչպէս անում ենք մենք, երբ սիրում ենք մի անսիրտ տիրոջ…

Գր. Բալասաքէկեան





# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—:—

1914 թուի յուլիսի վերջերին, երբ դեռ նոր էր սկսուած պատմութեան մէջ նման չտեսնուած այս համաշխարհային պատերազմը, մի շարք յայտնի տնտեսառազմագէտները հիմնուելով հրապարակում եղած թուերի վրայ, ապացուցանում էին, որ այսպիսի միահռելիութիւն ներկայացնող պատերազմը, չի կարող մի տարուց աւելի երկար տևել, բայց փաստն եկաւ հակառակն ապացուցելու։ Այժմս 16-րդ ամիսն է, իսկ պատերազմը կարծես նոր է սկսուել։

Տարւայ ընթացքում երևան եկած այն ռազմական կատարելագործուած տեխնիկան, գերակշռութիւն ձեռք բերելու համար գործ դրուած այն հսկայական նա-

խապատրաստութիւններ և հրապարակ հանւած այն աներևակայելի կապիտալը, այնպիսի մի անսպասելի երևոյթներ էին, որ այժմս արդէն ոչ մի տնտեսագէտ, չի համարձակւի կարծիք յայտնել, չկարողանալով գուշակել, թէ դեռ ինչ անակնկալներ կարող են երևան գալ և իրենց հաշիւը ջուր գցել։

Միակ իրողութիւն այն է, որ պատերազմ ոչ միայն շարունակւում է իր առաջւայ թափով, այլ մինչև այժմս չէզոք համարւող պետութիւններն էլ կռւի մէջ խառնւելով ընդարձակում են ռազմաբեմ նոր ռազմաճակատներ ստեղծելով...

Բայց ինչ տեսակ փոփոխութիւններ էլ, որ տեղի ունենան, ինչ տեսակ էլ և էջների էլ որ ականատես լինենք, դարձեալ



մենք մնում ենք մեր անցեալում յայտնած կարծիքին, որ վերջնական յաղթանակը ռուս ֆրանսանգլիացոց կողմ կլինի, և այդ մենք ասում ենք ոչ թէ լոկ մեր դէպի յիշեալ պետութիւնները ունեցած համակրութիւնից, այլ ճշմարտութեան վրայ հիմնւած մեր հայեացքից։ Ճշմարտութիւն ասում է, որ նման պատերազմներից յաղթական դուրս գալու համար երեք բան անհրաժեշտ է. առաջին փող, երկրորդ՝ ոյժ, երրորդ՝ տեխնիկան, Անգլիան յայտնի է իր անբաւ կապիտալով, Ռուսաստանը իր անսահման տոկուն ոյժերով, Ֆրանսիան թէ հարստութեամբ և թէ տեխնիկայով, դեռ չհաշւած այն բազմաթիւ առաւելութիւններ, որոնք հաւասար ոյժերի դէպքումն էլ դերակշռութիւնը վերագրեալ պե-

տութիւնների կողմն են թեքում։ Մանաւանդ երբ նկատի ենք առնում այն հանգամանքը, որ Գերմանիան և Աւստրիան պարփակւած լինելով իրենց սահմաններում, հնարաւորութիւն չունեն դրսից պաշար ստանալու, մինչդեռ փաստ է, որ ամենայաջող տարին անգամ, նրանց երկրի արտադրութիւնը հազիւ կարողանում է եօթն ամսւայ պաշար հայթհայթել, իսկ տարւայ հինգ ամիսների համար, նրանք՝ նոյնիսկ խաղաղ ժամանակ, երբ բոլոր աշխատող ձեռքեր ազատ են լինում ստիպւած էին դրսից գլխաւորապէս Ռուսաստանից հաց մուծել։

Գերմանիան որպէս նախաձեռնող այս պատերազմին, անշուշտ նախօրօք պատրաստել էր, բայց ստացւող տեղեկութիւններ հաս-



տատում են, որ նրա պատրաստութիւններն անսահման չէին, և այժմս նա ոչ միայն կենսական մթերքների անչափ կարիք ունի, այլ և ընդհանրապէս ամեն տեսակ հում նիւթի, առանց որի նա չի կարող երկար կռւել. այդ կարիքի ստիպողականութեան պիտի վերագրել նրա այժմեան՝ հէնց իր համար կորստաբեր յախուռն յարձակումներ...

Անգլիական տորմիղը երկաթէ օղակի նման սեղմելով նրա ափեր, զրկել է նրան բաց ծով դուրս գալու հնարաւորութիւնից, միակ յոյս Թիւրքիան է մնացել, որի հետ շղթայւելու համար իր օրհասական ճիգերն է գործ դընում։ Այդ ճիգերին պէտք է վերագրել Բուլղարիայի հետ կնքած զինակցութիւնը, որն իր ցեղակից Սերբիայի դէմ ունեցած

վրէժխնդրութեան յագուրդ տալու համար, դաւաճանեց իր ազատարար պաշտպան Ռուսիային, և իր դարևոր ոսոխ Թիւրքիային բարեկամութեան և զինակցութեան ձեռք մեկնեց։ Թէ ինչ հետևանք կունենայ Բուլղարիայի մասնակցութիւնը այս պատերազմին, այդ մենք շուտով կը տեսնենք, բայց որ նա չի կարող յաղթանակ տանելու դերակշռութիւն Գերմանիայի կողմ թեքել այդ մենք անկասկած ենք..

Խ. Տ.-Յ.



# ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

*Մի պատմուածք հռչակաւոր «Հազար ու մի գիշերներից»*

—

Ոսկեձոյլ և գոհարազարդ գահոյքի մէջ ընկղմած մտորում էր Բաղդադի մեծ ամիրապետ Հարուն-էլ-Րաշիտն, երբ նրան ներկայացաւ իր սիրելի և հաւատարիմ վէզիր Ջաֆէրը։ Այս պաշտօնեան տեսնելով տիրոջ վերին աստիճանի տխրութիւնը, իր տեղում կանգնած մնաց, մինչև որ տէրը իրեն նայել կբարեհաճէր։

Վերջապէս ամիրապետը Ջաֆէրին նայելով կրկին շուռ տուեց իր հայեացքը և մնաց իր առաջուան անշարժ վիճակում։

Վէզիրը նկատելով, որ ամիրապետի նայուածքի մէջ մի առանձին խստութիւն չկայ, սիրտ ա-

ռաւ և սկսեց այսպէս խօսել։

—Հաւատացեալների իշխան, ձեր վեհափառութիւնը կը բարեհաճի՞ ասել, թէ ինչո՞ւ համար այդպէս մելամաղձոտ դրութեան մէջ կգտնւի,

—Ճշմարիտ է, վէզիր, պատասխանեց ամիրապետը դիրքը փոխելով, երբեմն պատահում է ինձ այսպիսի բան, և այժմս էլ եթէ չազդարարէիր, գուցէ չզգայի գտնւած վիճակս։

Թէ յատուկ գործով չես եկել, մեծ բաւականութիւն պատճառած կլինես ինձ, եթէ կարողանաս մի հնար գտնել ինձ պաշարող այս թախիծը փարատելու։

—Հաւատացեալների իշխան, վրայ բերաւ մեծ վէզիրը, պարտականութիւնս ստիպեց ինձ այստեղ գալու, և համարձակւում եմ յիշեցնել ձեզ, որ անհրաժեշտ



է անձամբ քննել, թէ՝ արդեօք մայրաքաղաքիդ և շրջակայ երկիրներիդ կառավարութիւնը ձեր ցանկութեան համաձայն կը կատարւի՝ թէ ոչ։ Այսօրւան համար որոշեցէք այս ծանրութիւնը, դա շատ յարմար առիթ է ձեր սովորական զւարթութիւն պաշարող ամպեր փարատելու...

—Լաւ յիշեցրիր, մոռացել էի, պատասխանեց ամիրապետն, շատ յարմար ժամանակին միտքս բերիր այդ բանը, գնայ ուրեմն հագուստդ փոխիր մինչև որ ինքս էլ կըփոխւեմ։

Մի ժամից յետոյ, օտարերկրացի վաճառականի հագուստով ծպտւած ամիրապետն և իր վէզիրը, պալատի պարտիզի մի ծածուկ դռնից դաշտ դուրս ելան, և քաղաքը դրսից շրջապտոյտ անելով մինչև Եփրատի ափերը

հասան, որը քաղաքի դռնից բաւական հեռու էր գտնւում. ամեն ինչ կանոնաւոր դրութեան մէջ գտնելով, նաւակով գետն անցան, քաղաքի միւս կողմն էլ շըրջելով կամուրջի ճանապարհն բռնեցին որ քաղաքն էր տանում։

Այս կամուրջն անցնելիս, մի կոյր ծերունի աղքատ տեսան, որ մի կողմը կանգնած ողորմութիւն էր խնդրում, ամիրապետը յետ դարձաւ և մի ոսկի տուեց նրան։

Բայց կոյրն իսկոյն նրա ձեռք բռնելով կանգնեցրեց.

—Ո՛վ դու ողորմած մարդ, ասաց նա, ով էլ որ լինիս, անշուշտ Աստուծոյ դրդմամբ ինձ ողորմութիւն տուիր ուստի շնորհ արա ինձ մի ապտակ էլ տալու, և իմացիր որ ես նրանից աւելի մեծ պատժի եմ արժանի։



Խօսքը վերջացնելով ամիրապետի ձեռքը թողեց, որ իրեն ապտակ խփի, բայց կասկածելով որ նա կարող է առանց ապտակելու անցնել, բռնեց նրա փէշից։ Ամիրապետը կոյրի առաջարկութեան վրայ զարմանալով։

—Բարի մարդ, ասաց նրան չեմ կարող խնդիրքդ կատարել և տուած ողորմութեանս արժէքը կորցնել, քեզ հետ այդպէս խիստ վարուելով, և ճիգ արեց կոյրի ձեռքից փէշը ազատելու։

Բայց կոյրը, որ փորձառութեամբ գիտէր իրեն ողորմացողների ընդդիմութիւնը, նրան կանգնեցնելու աւելի մեծ ճիգ գործ դրեց։

—Տէր իմ, վրայ բերեց կոյր, ներիր իմ համարձակութեանս և տուած նեղութեանս, աղաչում եմ ապտակիր ինձ, եթէ ոչ ետ առ

տուածդ ողորմութիւնը, ես այդ պայմանով միայն ողորմութիւն կվերցնեմ, որպէս զի Աստուծոյ առաջ արած իմ մի հանդիսաւոր երդմանս դէմ չը մեղանչեմ. և եթէ սրա պատճառը գիտենայիր, ինքդ էլ կվկայէիր, որ այս պատիժը շատ թեթև է ինձ համար։

Ամիրապետը, որ երկար կանգնելու հնարաւորութիւն չունէր, զիջելով կոյրի թախանձանքին բաւական թեթև կերպով ապտակեց նրան, կոյրն իսկոյն ձեռքը թողեց և շնորհակալութիւն յայտնելով օրհնեց նրան, որն իր մեծ վէզիրի հետ շարունակեցին իրենց ճանապարհը, բայց հազիւ մի քանի քայլ հեռացել էին, երբ ամիրապետը ետ դարձաւ դէպի վէզիրը և ասաց.

—Երևում է, որ այս կոյրը իրեն ողորմութիւն տուողների հետ



այդպէս վարուելու մի հիմնաւոր պատճառ ունի. ցանկանում եմ այդ պատճառն իմանալ, ուստի ետ դարձիր և յայտնիր նրան իմ ով լինելս, ու պատուիրիր որ վաղը կէսօրուայ աղօթքից յետոյ պալատս գայ, նրա, հետ խօսել եմ ուզում։

Վէզիրը յետ դարձաւ, ողորմութիւն տուեց կոյրին և սովորական չափալախն հասցնելուց յետոյ, պէտք եղած պատուէրներ տուեց և ամիրապետի մօտ դարձաւ, որ միասին քաղաք մտան։

Հետևեալ օրը կէսօրուայ աղօթքից յետոյ, մեծ վէզիրը ամիրապետի սենեակը մտցրեց կոյրին, որը սուլթանի գահի առաջ խոնարհելուց յետոյ ոտքի ելաւ։ Այն ժամանակ ամիրապետը հարցրեց նրա անունը։

—Պապա Աբդլլահ է իմ անու-

նըս պատասխանեց կոյրը։
—Պապա Աբդլլահ, վրայ բե-
րեց ամիրապետը, քո ողորմու-
թիւն խնդրելու ձևը ինձ այնքան
այլանդակ երևաց, որ եթէ մի
մասնաւոր պատճառ չունենայի,
քո կամքը երբէք չէի կատարի և
չէի թոյլ տայ, որ այդ տեսակ
վարմունքով հասարակութիւնը
գայթակղեցնէիր, ուստի քեզ
կանչել տւի, իմանալու համար,
թէ ինչ պատճառով մի այդպիսի
անխոհեմ երդում ես արել։ Քո
պատմածից պիտի դատեմ, թէ
արդեօք լաւ է ընթացքդ, վերջա-
պէս դրա համեմատ էլ պիտի
ներեմ քեզ, այդպիսի տարօրի-
նակ ձևով՝ ողորմութիւն տւող-
ներին շնորհակալութիւն յայտ-
նելու գործիդ մէջ։ Ուրեմն ա-
ռանց մի բան պահելու ասա ինձ,
թէ ով մտցրեց քեզ մէջ այդ այ-



լանդակ գաղափարը, ես ուզում
եմ անպատճառ իմանալ։
Պապա Աբդլլահը վախենալով
այդ յանդիմանութիւնից, կրկին
անգամ երկրպագութիւն արեց,
ճակատը ամիրապետի գահի ա-
ռաջ գետին քսելով, և երբ ոտքի
ելաւ.
—Հաւատացեալների իշխան,
ասաց նա, խոնարհաբար ներում
իմ խնդրում ձեր վեհափառութիւ-
նից համարձակութեանս համար,
որով պահանջեցի և մինչև ան-
գամ ստիպեցի, որ ինձ այնպիսի
բան անէք, որ արդարև կարող
էր ձեզ անհաճոյ երևալ։ Խոստո-
վանում եմ յանցանքս, բայց ո-
րովհետև չը ճանաչեցի, ուստի
ձեր վեհափառութեան ներողա-
մտութիւն եմ հայցում և յոյս
ունեմ, որ տգիտութեանս հաշտ
աչքով պիտի նայէք։ Իսկ ձեր

այլանդակ անուանած գործը, որ ամենքին էլ իրօք այլանդակ է երևում, պէտք է ասեմ, որ դա իմ Աստուծոյ առջև գործած ահագին յանցանքիս մի թեթև ապաշխարութիւնն է միայն, որով դարձեալ մեղքս չպիտի կարողանամ քաւել։ Թող ձեր վեհափառութիւնը դատաւոր կանգնի, երբ պատմեմ իմ պատմութիւնս. ես հաւատացած եմ, որ այն ժամանակ միայն կարող էք չափել իմ յանցանքիս մեծութիւնը։

—

—Իշխանդ հաւատացելոց, ըսկսեց իր պատմութիւնը Պապա Աբդլլահը. Բաղդադումն եմ ծընուել, ծնողներս որոնք իրար յետևից մեռան, ինձ մի փոքրիկ հարստութիւն միայն թողին, թէև նորահաս էի, բայց դարձեալ աւելորդ ծախսեր չարի. և ուրիշ



շատ երիտասարդների նման փողերս անառակութեան մէջ չվատնեցի, ընդհակառակ իմ ճարտարութեան շնորհիւ ինձ յաջողուեց կարճ միջոցում ժառանգութիւնս աւելացնել։ Վերջապէս երբ բաւականին հարստացայ, ութսուն հատ ուղտ գնեցի և կարաւանով ճանապարհորդող վաճառականներին վարձու տալով բաւականին դրամ շահեցի։

Այս յաջող դիրքիս և աւելի հարստանալու անգուսպ ձգտումիս միջոցին, մի օր Պասրայից առանց բեռների ուղտերովս ետ դառնալու ժամանակ, ճիշտ այն պահին երբ կենդանիները մարգագետնին վրայ արածելու էի թողել, մի հետիոտն Պասրա գնացող դերվիշ եկաւ, մօտս նստեց հանգստանալու, հարցրի նրա որտեղից է գալը և ուր է գնալը,

Նա էլ ինձ հարցրեց և երբ իրար հետաքրքրութիւնը գոհացրինք, մեր ուտելիքները միացնելով միասին ճաշեցինք։

Ճաշը վերջացնելուց և զանազան նիւթերի վրայ խօսակցելուց յետոյ, դէրվիշն ասաց, թէ այս մեր գտնուած տեղից քիչ հեռու, անբաւ գանձերով լի մի տեղ գիտէ, որ եթէ իմ ութսուն ուղտերս այնտեղ գտնուած ոսկի-ադամանդներով բեռնաւորէին, դարձեալ կարծես ոչինչ չէր վերցրուած նրանից։

Այս յաջող լուրը ինձ զարմացնելով, միանգամայն և զմայլեցրեց, չկասկածելով դէրվիշի անկեղծութեան ուրախութիւնից շփոթուած նրա վզովը փաթաթուելով ասեցի,

—Բարի դէրվիշ տեսնում եմ, որ աշխարհիս հարստութեան վը-



րայ աչք չունիս, ուրեմն ի՞նչ օգուտ ունի, եթէ դու մի այդպիսի հարուստ գանձի տեղը գիտես։ Գոնէ ինձ ցոյց տուր այդ տեղը, ես իմ ութսուն ուղտերս նրանցով բեռնաւորեմ և ի նշան դէպի քեզ ունեցած երախտագիտութեանս, մէկը նրանցից բեռնաւորուած քեզ ընծայեմ։

Ճիշտ է, որ նրան առաջարկածս ընծան քիչ էր, բայց այդ րոպէին իմ կարծիքովս շատ շատ էր, որովհետև սրտիս մէջ մի այնպիսի ագահութիւն էր մտել, որ ինձ մնացող եօթանասուն և ինը բեռը ոչինչ էր երևում, նրան խոստացածս մի բեռան հանդէպ։

Դէրվիշը իր յայտնած հարըստութեան համար իմ ունեցած տենչս տեսնելով՝ և իրեն արած անմիտ առաջարկութիւնից չըգայթակղելով․

—Եղբայր իմ, ասաց նա, առանց այլայլելու, դու էլ լաւ ես հասկանում, որ խոստացածդ բարիքը ինձանից խնդրածիդ համեմատութեամբ շատ չնչին է, ես կարող էի գանձի տեղը գաղտնի պահել, բայց քանի որ յայտնեցի, նկատի պիտի ունենայիր, որ միտքս բարի լինելով ուզում եմ դրանով քեզ բաղդի և հարըստութիւն տիրացնել, ուստի աւելի արդար լինելու համար առաջարկում եմ, որ ութսուն ուղտն էլ միասին բեռնաւորենք, ինչքան որ ոսկի և ադամանդ կարողանան վերցնել, յետոյ հաւասար կերպով բաժանենք, և մեր ցանկացած տեղեր տանենք, դու քո գնալիք ճանապարհով, ես իմ։ Նկատի ունեցիր, որ եթէ դու ինձ քառասուն ուղտ ես ընծայում, իմ միջոցովս էլ այնքան հարըս-



տութիւն ես ստանում, որով կարող ես հազարաւոր նոր ուղտեր գնել։

Թէև դէրվիշի առաջարկած պայմանը արդարացի էր, բայց ես ներքուստ դժւարութեամբ ընդունեցի, որովհետև մեծ կորուստ էի համարում ուղտերիս կէսից զրկւել, թէկուզ դէրվիշի ընձեռնած այն մեծ հարստութեան գնով. վերջապէս ուզում էի ապերախտութեամբ փոխարինել ինձ խոստացւած մի բարեգործութիւն, որ դեռ չէի ընդունել, բայց վարանելու ժամանակ չէր։ Իսկոյն գումարեցի ուղտերս և միասին ճանապարհ ընկանք, մի կարճ միջոց գնալուց յետոյ, բաւական ընդարձակ մի հովիտ հասանք, որի մուտքը շատ նեղ լինելով ուղտերս ստիպւած էին մէկ-մէկ անցնել, բայց

որովհետև գնալով ճանապարհը լայնանում էր, ուստի բոլոր միասին գնալու յարմարութիւն ունեցան։

Այն երկու լեռները, որոնց ծայրերը կիսաշրջան անելով այդ հովիտ կշրջապատէին, այնքան բարձր էին, միանգամայն սեպաձև և անմատչելի, որ ո և է մէկից տեսնուելու երկիւղ չկար, ուստի երբ հովտի մէջտեղը հասանք.

—Աւելի առաջ երթալու կարիք չկայ, ասաց դէրվիշը, ուղտերդ նստեցրու, որ բեռնաւորելիս դժւարութիւն չկրենք, ես էլ գանձ բանալու գործողութիւն պիտի սկսեմ։

Դէրվիշի պատուէրը կատարելով իսկոյն նրա մօտ դարձայ, որ կայծքար ձեռք բերած վառելու համար չոր փայտ էր փնտռում, հազիւ թէ կրակը վառել էր, երբ



դէրվիշը ինձ անհասկանալի մի քանի բառեր արտասանելով, նրա մէջ մի քիչ խունկ գցեց, որից անմիջապէս թանձր ծուխը սկսեց դէպի վեր բարձրանալ։ Երբ ծուխը ցրուեց այն ժամանակ այդ երկու լեռների մէջ գտնուած ժայռը, որ թէև շատ բարձր էր ու ուղղահաեաց և նախապէս ոչ մի ճեղք չունէր, կարծես մի գեղեցիկ արհեստով երկու փեղկով դրան նման բացուեցաւ, և մեր աչքերի առաջ պարզուեց ժայռի մէջ կառուցուած մի փառաւոր և հսկայ պալատ, որն անկասկած ջիներու (դէվերու) գործ լինելու էր, քան թէ մահկանացու մարդկանց, որոնք անկարող են նման հիանալի ճարտարապետական մի հրաշակերտ ձեռնարկել։

—Բայց վեհափառ տէր, այս դիտողութիւնները այն ժամա-

նակ չարի, և զարմանալին այն է, որ ամեն կողմից երևացող այն անբաւ հարստութիւնից չշլացայ, և այդ գեղեցիկ պալատի ու նրա բազմապիսի գանձերի դասաւորութիւնը դիտելու համար ժամանակ չկորցրի, այլ իր ոսկի վրայ յարձակւող արծւի նման, առաջս ածւած ոսկու կոյտերի վրայ ընկնելով, հետս բերած պարկեր լցրի, որ թէև մեծ էին, բայց ստիպւած էի ուղտերի ոյժի համեմատ գործ կատարել։

Դէրվիշն էլ նոյնն էր անում, բայց նայեցի, որ նա աւելի ադամանդներ էր հաւաքում քան ոսկի, և որովհետև դրա պատճառը բացատրեց, ես էլ նրա օրինակին հետևելով՝ երկուքս էլ աւելի անգին քարեր հաւաքեցինք քան դրամ. վերջապէս երբ բոլոր պարկերը լցնելով ուղտե-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР



Անդրանիկը եւ իր Թիկնապահները

րը բեռնաւորեցինք, մնում էր միայն պալատը իր գանձերով ծածկել և մեկնել։

Բայց մեկնելուց առաջ, դէրվիշը մի անգամ էլ գանձատուն մտաւ, ուր բազմաթիւ գեղեցիկ ու սքանչելի տեսակ-տեսակ ոսկեղէն ու թանկագին մետաղներից ամաններ կային, որոնցից մէկի միջից, ինձ անծանօթ փայտից մի փոքրիկ տուփ վերցրեց, և ինձ ցոյց տալով ծոցը դրեց, այդ տուփի մէջ ինչ որ մի տեսակ իւղ կար։

Դէրվիշը, ինչ արարողութիւն որ արել էր գանձը բանալու համար, նոյն արեց և փակելու համար, ու մի քանի խօսք արտասանելով ժայռը իր նախկին բնական վիճակն ստացաւ։ Այն ժամանակ մենք բեռնաւորուած ուղտերը մէջներս բաժանելով ոտքի



հանեցինք. ես ինձ բաժին ընկած քառասուն ուղտերիս գլուխն անցայ, դէրվիշն էլ իրեն ընկած ուղտերի գլուխն անցած հովիտի մուտքից դուրս եկանք մինչև մեծ ճանապարհը, ուր պիտի բաժանուէինք իրարից, նա դէպի Պասրա, ես դէպի Բաղդադ։ Այդտեղ ես իմ շնորհակալութիւնս յայտնելով ինձ արած բարիքի համար ջերմ գրկախառնութեամբ իրար մնաս բարով ասելով բաժանուեցինք։

Բայց հազիւ մի քանի քայլ առել էի. ուղտերիս միտնալու, որ չգիտեմ ինչպէս ապերախտութեան և նախանձի սատանան սիրտս գրաւեց, իմ կորցրած քառասուն ուղտերիս վրայ էի ցաւում, մանաւանդ նրանց բարձած գանձերի վրայ։

Դէրվիշը այդ հարստութեան

րը բեռնաւորեցինք, մնում էր միայն պալատը իր գանձերով ծածկել և մեկնել։

Բայց մեկնելուց առաջ, դէրվիշը մի անգամ էլ գանձատուն մտաւ, ուր բազմաթիւ գեղեցիկ ու սքանչելի տեսակ-տեսակ ոսկեղէն ու թանկագին մետաղներից ամաններ կային, որոնցից մէկի միջից, ինձ անծանօթ փայտից մի փոքրիկ տուփ վերցրեց, և ինձ ցոյց տալով ծոցը դրեց, այդ տուփի մէջ ինչ որ մի տեսակ իւղ կար։

Դէրվիշը, ինչ արարողութիւն որ արել էր գանձը բանալու համար, նոյն արեց և փակելու համար, ու մի քանի խօսք արտասանելով ժայռը իր նախկին բնական վիճակն ստացաւ։ Այն ժամանակ մենք բեռնաւորուած ուղտերը մէջներս բաժանելով ոտքի



հանեցինք. ես ինձ բաժին ընկած քառասուն ուղտերիս գլուխն անցայ, դէրվիշն էլ իրեն ընկած ուղտերի գլուխն անցած հովտի մուտքից դուրս եկանք մինչև մեծ ճանապարհը, ուր պիտի բաժանուէինք իրարից, նա դէպի Պասրա, ես դէպի Բաղդադ։ Այստեղ ես իմ շնորհակալութիւնս յայտնելով ինձ արած բարիքի համար ջերմ գրկախառնութեամբ իրար մնաս բարով ասելով բաժանուեցինք։

Բայց հազիւ մի քանի քայլ առել էի. ուղտերիս միանալու, որ չգիտեմ ինչպէս ապերախտութեան և նախանձի սատանան սիրտս գրաւեց, իմ կորցրած քառասուն ուղտերիս վրայ էի ցաւում, մանաւանդ նրանց բարձած գանձերի վրայ։

Դէրվիշը այդ հարստութեան

կարիք չունի, մտածում էի ես, նա այնտեղ եղած բոլոր գանձերի տէրն է, որից ցանկացած ժամանակ կարող է պէտք եղածին չափ վերցնել, ուստի որոշեցի նրա ուղտերը իրենց բեռներով գրաւել, այս որոշումս իրագործելու համար նախ ուղտերս կանգնեցրի, յետոյ բոլոր ոյժովս դէրվիշի յետևից վազելով կանչեցի, որ կարևոր բան պիտի ասեմ, նշան անելով որ նա էլ իր ուղտերը կանգնեցնի, ձայնս լսեց և սպասեց, երբ նրան հասայ.

—Եղբայր իմ, ասի նրան, երբ քեզանից հեռացայ, մի բան յիշեցի, որ առաջ չէի մտածել, դու մի բարի և առաքինի դէրվիշ ես, ապրում ես աշխարհային կեանքից հեռու, տարւած միայն Աստծուն ծառայելու հոգսով։ Գուցէ չգիտես թէ ինչ մեծ ծանրութիւն



է այդ չափ ուղտերի հոգս քաշել, թէ ինձ լսես միայն երեսուն հատ կվերցնես, թէև նրանց խընամելն էլ շատ դժւար է, այդ ես իմ փորձառութեամբ գիտեմ։

—Կարծում եմ որ իրաւունք ունես, վրայ բերաւ դէրվիշը, խոստովանում եմ, որ այդ բան նախապէս չմտածեցի, արդէն ասածիդ պէս սկսեր էի անհանգըստանալ, ուստի ընտրիր հաւանածդ տասն ուղտը և տար Աստուած քեզ հետ թող լինի։

Իսկոյն տասն ուղտ ջոկելով դէպի միւս ունեցածներուս ճանապարհն ուղղեցի, որ գնան նրանց հետ խառնուեն։ Ցոյս չունէի թէ դէրվիշը այնչափ շուտով կհամոզուի, որով այդ բանը իմ ընչասիրութիւնս գրգռեց, և մտածեցի որ ուրիշ տասը ուղտ ևս կորզելու դժւարութիւն չպի-

տի կրէի, ուստի նրա արած հարուստ պարգևի համար փոխանակ շնորհակալ լինելու։

—Եղբայր իմ, ասի նրան դարձեալ, քո հանգստութիւնդ նկատի առնելով, չեմ կարող քեզանից հեռանալ, առանց խնդրելու, որ համոզուես, թէ որքան դժուար է, այս երեսուն ուղտեր առաջնորդել, մանաւանդ քեզ նման անվարժ մարդու համար։ Այսքան գիտեմ միայն, որ աւելի կըթեթևանաս եթէ արդէն արած ընծայիդ պէս, մի նոր ընծայ էլ անես։ Այս ասածս այնքան իմ օգտի համար չէ, որքան քու, որովհետև մի մեծ ծանրութիւնից կազատէ քեզ, ուստի եկ ուղտերիցդ տաս հատն էլ իմ գլխիս կապիր, քանի որ ինձ նման մարդի համար միևնոյն բան է մէկ եմ խնամել թէ հարիւր։



Խօսքերս ցանկալի ազդեցութիւնն արին, և դէրվիշը առանց ընդդիմութեան տասն ուղտ ևս տուեց. որով նրան քսան հատ մնաց, այսպիսով ես վաթսուն ուղտի տէր եղայ, որոնց բեռները շատ թագաւորների գանձից աւելի արժէք ունէին։

—Բայց վեհափառ տէր, ջրգողի նման, որ ինչքան ջուր խմէ, այնքան կըպապակի, առաջուանից աւելի սոսկալի փափագ ունեցայ միւս քսան ուղտերն էլ ձեռք ձգելու։ Ուստի սկսեցի աղաչել, որ դէրվիշը մնացած քսան ուղտից տասն ևս ինձ տայ։ Դէրվիշը խնդիրքս կատարեց, իսկ մնացած տաս ուղտի համար էլ, այնքան գըրկեցի, համբուրեցի համոզեցի, որ վերջապէս յայտնեց թէ աղաչանքս ընդունում է, որով սիրտս խնդութեամբ լցուեց։

—Լաւ գործածիր, այդ հարըստութիւնները յարեց դէրվիշը, և միշտ յիշիր, որ Աստուած ինչպէս կուտայ, այնպէս էլ կարող է մեր ձեռքէն առնել, եթէ աղքատներին չօգնենք որոնց դիտմամբ խղճութեան մէջ է թողնում որ հարուստներին առիթ տայ իրենց ողորմութեամբ նըրանց օգնելու և հանդերձեալ կեանքին մէջ մեծագոյն վարձքն ստանալու։

Իմ կուրութիւնս այս մասին այնքան մեծ էր, որ այդ խրատներէն օգտուել չկարողացայ, բաւական չհամարելով անգին գանձերով բեռնաւորուած իմ ութսուն ուղտերս, որով կարող էի աշխարհիս ամենաերջանիկ մարդ դառնալ, միտքս եկաւ դէրվիշի վերցրած փայտեայ տուփով իւղը, որ ինձ ցոյց էր տուել, կարող



է պատահել, որ իմ ունեցած հարստութիւնից մեծ արժէք ունենայ մտածեցի ես. ուստի որոշեցի այն էլ ձեռք ձգել, դէրվիշին նորից գրկախառնուած մնաս բարև ասելուց յետոյ, հազիւ թէ բաժանուել էի, երբ յանկարծ ետ դառնալով ասի։

—Բարեկամ, ինչ պիտի անես այն իւղի տուփը, այնպիսի չընչին մի բան է, որ պահելդ չարժէ, խնդրեմ ինձ ընծայիր, քեզ նման աշխարհից հրաժարուած դէրվիշը այդպիսի իւղի կարիք չի ունենայ։

Երանի թէ այդ տուփը ինձ տալու մերժէր, բայց եթէ մերժելու էլ լինէր, ես չպիտի գիջէի, նրանից շատ ոյժով լինելով բռնի կերպով ձեռքէն պիտի խլէի, թէև նրան չափազանց երախտապարտ եղած լինէի։ Բայց

դէրվիշը ոչ միայն չմերժեց, այլ տուփը ծոցից հանելով, շատ շնորհալի կերպով ինձ ներկայացնելով ասաց.

— Ահա առ, եղբայր իմ, եթէ սրանով միայն կարող ես գոհ լինել։ Եթէ ուրիշ խնդիր էլ ունես, պատրաստ եմ այն էլ կատարելու։

Երբ տուփը ձեռքս առի և մէջ գտնուող իւղը քննեցի, ասեցի նրան։

— Քանի որ այդ չափ խընդրածներս կատարեցիր, և խոստանում ես ինձ միշտ բարիք անել, խնդրում եմ շնորհ անես ինձ բացատրելու թէ այս իւղը ինչ բանի համար կը գործածուի։

— Նրա գործածութիւնը հրաշալի է, պատասխանեց դէրվիշը, եթէ այս իւղից մի քիչ ձախ աչքիդ և արտևանունքիդ վրայ քսես,



երկրիս ծոցում պահուած բոլոր գանձերը աչքիդ առջև կերևայ, բայց եթէ աջ աչքիդ վրա- քսես, իսկոյն կկուրանաս։

Ուզում էի անձամբ փորձել, այս հրաշալի իւղի ազդեցութիւնը, ուստի տուփը դէրվիշին տալով ասացի։

— Առ այս տուփը, և քո ձեռքովդ այդ իւղից փոքր ինչ ձախ աչքիս քսի, դու ինձնից աւելի լաւ կարող ես քսել, շատ անհամբեր եմ այդ անհաւատալի բանին, արդիւնքը տեսնելու։

— Դէրվիշը յօժարակամ յանձն առաւ, և աջ աչքս գոցել տալով, իւղը քսեց ձախ աչքիս վրայ։ Երբ աչքս բացի, տեսայ որ ասածը ճշմարիտ էր։ Իսկապէս անհամար գանձեր տեսայ, որոնք թանկագին ամաններով լիքն էին, որոնց անկարող եմ այժմս նկա-

րագրել, բայց որովհետև պարտաւոր էի աջ աչքս ձեռքով գոց պահել, որով և յոգնում էի, խընդրեցի դէրվիշից որ այդ աչքի վրայ էլ քսի այն իւղից։

—Պատրաստ եմ այդ խնդրածդ էլ կատարելու, պատասխանեց դէրվիշը, բայց յիշիր, որ քիչ առաջ արդէն յայտնեցի քեզ. թէ աջ աչքիդ վրայ այս իւղէն եթէ քսես, իսկոյն կկուրանաս։ Այս է այս իւղի յատկութիւնը, պէտք է այդ բանը նախապէս գիտենաս և դրա համեմատ էլ շարժիս։

Բայց ես ոչ միայն չհամոզուեցի, որ դէրվիշը ճշմարիտ է ասում այլ կարծեցի թէ անպատճառ մի գաղտնիք կունենայ որն ուզում է ինձանից թագցնել։

—Եղբայր իմ ասի ժպտալով, տեսնում եմ որ գործը տարբեր ձևով ես ուզում ներկայացնել,



մինչդեռ բնական չէ միևնոյն իւղը երկու իրար հակառակ ներգործութիւն ունենայ։

—Բայց իմ ասածս բուն իսկ ճշմարտութիւնն է, վրայ բերաւ դէրվիշը Աստծու անունը վկայութիւն բերելով, հաւատայ խօսքիս, որովհետև ես երբէք սուտ չեմ խօսել։

Ջաւղեցի դէրվիշի խօսքին վստահել թէև իր պատուի վրայ էր երդւում, այնպիսի մի երևակայութեամբ պաշարուել էի, որ կարծում էի, եթէ այն իւղը, որ ձախ աչքիս քսելով երկրի բոլոր գանձերը ցոյց տալու յատկութիւնը ունէր, աջ աչքիս քսելով հաւանօրէն ինձ նրանց տիրացնէր։ Այս մտածութեամբ դէրվիշին ստիպեցի, որ աջ աչքիս էլ քսէ, բայց նա միշտ հա-

կառակում և յամառելով չէր ուզում խնդիրս կատարել։

—Քեզ այս չափ բարիք անելուց յետոյ, եղբայր իմ, ասաց նա, չեմ կարող քո անձից դէմ այդպիսի մեծ չարիք գործելու յանձնառու լինել, ինքդ մտածիր, թէ ինչպիսի մեծ դժբաղդութիւն է կոյր լինել, և մի ստիպիր ինձ այնպիսի մի աղէտալի գործ անելու, որի վրայ ամբողջ կեանքումդ պիտի ողբաս։ Բայց ես իմ կողմից այն աստիճան յամառեցի, որ վերջապէս։

—Եղբայր իմ, ասի նրան, խնդրում եմ այդ բոլոր դժուարութիւնները մի կողմը թող. ինչ որ մինչև այժմս խնդրեցի վեհանձնօրէն կատարեցիր, ուզում ես, որ այսպիսի մի չնչին բանի համար քեզանից դժգոհ բաժանուեմ. յանուն Աստուծոյ եկ այս



վերջի շնորհն էլ ինձ մի մերժիր, ինչ որ պատահի, մեղքը ինձ վրայ պիտի վերցնեմ, ինքս պիտի պատասխանատու. Թեամ իմ անձիս առաջ։

Դէրվիշը բոլոր կարելի եղած ընդդիմութիւն արեց, բայց տեսնելով, որ խիստ միջոցների պիտի դիմիմ։

—Քանի որ այդպէս շատ ես ցանկանում, ասաց նա, քեզ պիտի գոհացնեմ և այդ դժընդակ իւղից մի քիչ վերցնելով աջ աչքիս վրայ քսեց, երբ ես գոցեցի, բայց աւա՜ղ, երբ դայն բացի, միայն մի թանձր խաւար տեսայ երկու աչքերովս, և այն օրից ի վեր երկու աչքով կոյր մնացի ինչպէս տեսնում էք։

—Ա՜հ, անօրէն դէրվիշ, գոչեցի ես, այն ժամանակ, դուշակածդ շատ ճշմարիտ է եղել,․ ու

սկսեցի պտտալով այս ու այն կողմ վազվզել, ո՜հ աղէտալի և անմիտ հետաքրքրութիւն, հարստութեան անյագ փափագ, ինչ անդունդի մէջ գցեցիք ինձ, այո՛, զգում եմ, որ այս փորձանքը իմ ձեռքով գլխիս բերի. բայց

—Դու սիրելի եղբայր, գոչեցի ես, Նորից դէրվիշին դառնալով, դու որ այդ չափ հրաշալի գաղտնիքների տէր ես, արդեօք աչքս բանալու որ և է գաղտնիք չունի՞ս։

—Թշւառական, պատասխանեց ինձ այն ժամանակ դէրվիշը, ես ձեռքիցս եկածն արի, որ քեզ այդ դժբաղդութիւնից ազատ պահեմ, բայց այժմս տես արժանի պատիժդ ստացար, որովհետև սրտիդ կուրութիւնն էր մարմնիդ կուրութիւն պատճառող։ Ճիշտ է, որ շատ գաղտնիքներ ունեմ, ինչպէս որ կարճ միջո-



Վարդան, Քեռի եւ Համազասպ

ցում հասկացար, բայց դժբաղդաբար աչքդ բանալու համար ոչ մի դարման չունեմ։ Ապաւինիր Աստծուն, եթէ հաւատում ես, որ մի Աստուած կայ. նա կարող է աչքդ բանալ. Քեզ այնքան հարստութիւն և գանձ պարգևեց որոնց արժանի չէիր. այժմս բոլոր ձեռքիցդ առեց, և իմ ձեռքովս աւելի երախտագէտ մարդկանց պիտի տայ։

Դերվիշն էլ ուրիշ ոչ մի խօսք չասեց, ես էլ նրան պատասխանել չկարողացայ. ինձ թողեց մենակ բոլորովին շփոթւած և այնպիսի ծանր վշտերու մէջ ընկղմած, որ անհնար է բացատրել, յետոյ իմ ութսուն ուղտերս հաւաքեց և իր ճանապարհը շարունակեց մինչև Բասրա։

Շատ աղաչեցի նրան, որ այդ դժբաղդ վիճակի մէջ չթողնի



ինձ, գոնէ մինչև առաջին օթևան առաջնորդէ ինձ, բայց նա աղաչանքներիս անզգայ մնաց։ Անտարակոյս ցաւից և անօթութիւնից կըմեռնէի, եթէ միւս օր Բասրայից դարձող մի կարաւանը ինձ բարեսիրաբար Բաղդադ չտանէր։

Այսպէս, հարստութեան և ճոխութեան կողմից մի իշխանի ունեցած վիճակից, ստիպւած եղայ մուրացկանութեան դիմել, ստիպւած էի սրանից նրանից ողորմութիւն խնդրել և մինչև այսօր այդպէս ապրում եմ, բայց Աստուծոյ առաջ յանցանքս քաւելու համար, կամաւ որոշեցի, որ իմ թշւառութեանս գթացող անձերից մի պատիժ ընդունեմ, և այս պատիժն է ահա այն ապտակը, որ ձեզանից այնքան թախանձանօք խնդրեցի։

—Ահա՛, իշխանդ հաւատացեալոց, իմ տարօրինակ վարմունքիս շարժառիթը, որով ձեր արտմտութիւնը գրգռեցի. երբ ձեր գերին, նորից ներումն եմ խընդրում, և պատրաստ եմ ձեր տուած պատիժները կրելու, եթէ շնորհ անէք մի ապաշխարանք դնել իմ վրայ, վստահ եմ, որ այդ ապաշխարանքը իմ յանցանքիս մօտ շատ թեթև պիտի լինի։

Երբ կոյրը իր պատմութիւնը վերջացրեց ամիրապետը նրան ասաց։

—Այո՛, յանցանքդ մեծ է Պապա Աբդլլահ, բայց օրհնեալ է Աստուած, որ Նրա ծանրութիւնը դու ինքդ զգացեր և անձիդ վրայ մի պատիժ ես դրել, որը բաւական է, այսուհետև պէտք է, առանձին ապաշխարհես, Աստուծոյ



աղօթելով կրօնական պարտաւորութիւններդ կատարես որ քեզ ներէ։ Եւ որպէս զի օրական ապրուստդ խնդրելու համար այդ պարտաւորութիւնիցդ ետ կենաս, իբր ողորմութիւն, մինչև կինացդ վերջ, չորս արծաթ դահեկան կսահմանեմ իմ գանձիցս, որ մեծ վէզիրիս ձեռքով կտանաս։ Ուստի մի վերադառնայ, այլ սպասիր որ նա իմ հրամանս կատարէ։

Այս խօսքին վրայ, Պապա Աբդլլահը ամիրապետին գահին առաջ երկրպագեց և իր շնորհակալութիւն յայտնեց, նրան ամեն տեսակ երջանկութիւն բարեմաղթելով...

## ՔԱՐՏԱՇՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Իտալիայի հետ միասին պատերազմ է յայտարարել աւստրօ-գերմանական միութեան աշխարհիս ամենափոքրիկ պետութիւն՝ Սան-Մարինօի հանրապետութիւնը: Նրա տարածութիւնն է 62 քառ. կիլոմետր և ազգաբնակութեան թիւը հասնում է 11 հազարի: Սա Եւրոպայի ամենահին «պետութիւններից» է: Համաձայն աւանդութեան, սրա հիմնադիր սուրբ Մարինօն IV-րդ դարում փախչում է Դալմատիայից իր կրօնական համոզմունքների պատճառով: Նա քարտաշ էր և մեծ հաւատացեալ: Հաստատուեց սուրբ Մարինօն Տիտանօ լեռան քարահանքում և մնաց սուրբ առանձնութեան մէջ: Մարինօի սուրբ կեանքի հռչակը գրաւում է բազ-



մաթիւ ուխտաւորներ: Սրանցից ոմանք մնում են նրա մօտ և այդպիսով առաջ է գալիս մի համայնք: Մարինօի մահից յետոյ հիմնուեց մենաստան, որ հիւրընկալում էր բոլորին: Համայնքի անդամները պարտաւոր էին աշխատել և պարզ ու առաքինի կեանք վարել: Համայնքը աճեց և հիմնուեց «կառավարութիւն» համայնքի ծերերից կազմուած: Երկար դարեր փոքրիկ պետութիւնը պայքարել է բազմաթիւ իշխանների դէմ, առանձնապէս Հռոմի փափի ոտընձգութիւնների դէմ: Փափի զայրոյթը մեծ է եղել Սան-Մարինօի դէմ մանաւանդ այն պատճառով, որ այստեղ, ապաստան էին գտնում շատ փախստականներ և քաղաքական ու կրօնական հալածականներ: Նապօլէօնը, որը նուաճ-

ւած երկիրներում հաստատում էր ֆրանսիական կարգեր, Սան-Մարինօի հետ շատ բարեկամաբար վարուեց և մինչև անգամ նուիրեց նրան երկու թնդանօթ, որ և պահւում է մինչև այժմ քաղաքի հրապարակում։ Նապոլէօնը առաջարկեց աւելի լայնացնել Սան-Մարինօի հողերը, բայց առաքինի ժողովուրդը պատասխանեց. «Մենք ուրիշից ոչինչ չենք խլում մենք պահում և պաշտպանում ենք միայն մերը»։ Սան-Մարինօյում շատ անգամ պատսպարուել և օգնութիւն է գտել Գարիբալդին։ Ազատասէր ժողովուրդը չի սարսափել հզօր Աւստրիայի ույժերից։ Զայրացած աւստրիացիներին հանրապետութիւնը պատասխանել է. «Հանրապետութիւնը կարող է մեռնել, աշխարհիս վրայ չկայ ոչինչ յա-



ւերժական, բայց այլ կերպ վարւել նա չի կարող, ապա թէ ոչ հանրապետութեան գոյութիւնն իսկ կը լինի անմիտ և աննպատակ»։ Փոքրիկ պետութեան ժողովուրդը չատ բարեկեցիկ է, պարապում է մեծ մասամբ երկրագործութեամբ, բայց և չի թողել իր նախահայրերի արհեստը՝ քարտաշութիւնը։

Պետական մեխանիզմը բարդ չէ. գլխաւոր խորհուրդն է օրէնըսդիրը։ Գործադիր իշխանութիւնը յանձնուած է երկու կապիտան-ռեգենտներին որոնք ընտրւում են կէս տարով, և պաշտօնավարում են առանց վարձատրութեան։ Պետութիւնն ունի իր դրամը, նամականիշը։ Արդարադատութեան գործը յանձնուած է երեք դատաւորների, որոնցից մէկը վարում է քաղա-

քացիական, միւսը բրէական գոր-
ծերը։ Երրորդը ներկայացնում է
բարձր ինստանցիան։ Եթէ գոր-
ծին ուզում են տալ ընթացք,—
կողմերը գնում են Իտալիա...
Մահւան պատիժը վերացւած է
արդէն յիսուն տարի սրանից
առաջ և բանտն էլ մեծաւ մա-
սամբ դատարկ է լինում։

Ամեն մի քաղաքացի 18-ից
մինչև 60 տարեկան հասակը
զինւորացու է։ Խաղաղ ժամա-
նակը գոյութիւն ունի միլիցիա։

Այժմ քարտաշների երկրում
զօրակոչ է յայտարարւած։ Զօր-
քը պիտի գտնւի կապիտան-ռե-
գենտների հրամանատարութեան
տակ։



## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

—

Ամեն մի պատերազմ անխուսա-
փելիօրէն ազգերի մէջ զար-
թեցնում է հայրենասիրու-
թիւն, ազգային վառ ինքնագի-
տակցութիւն։ Այս ընդհանուր
օրէնքը մանաւանդ պարտաւորե-
ցուցիչ և ստիպողական է այսօր-
ւայ մեծ պատերազմի նկատմամբ։
Չէ՞ որ այսօրւայ մեծ ճակատա-
մարտը գերազանցօրէն ազգերի
և ցեղերի ըմբշամարտ է։ Այսօր-
ւայ պատերազմը գերազանցօրէն
ազգերի ինքնաճանաչման կռիւ է։
Յիշենք Մեծ-Իշխանի երեք դի-
մումները. յիշենք նաև Էդւ. Գրէ-
յի ճառը և Պ. Ն. Բակստընի խօս-
քերը Սոֆիայում։ Այսօրւայ մեծ
պատերազմի արիւնոտ ջրերում

մկրտւում է ոչ միայն ապագայ մարդկային խաղաղ ոսկէդարը, այլև ազգերի վերածնութեան վառ արշալոյսը։ Ապա ուրեմն պարզ է, որ այս մեծ պատերազմը հայրենասիրական և ազգային ցեղային ինքնագիտակցութեան մեծ պորթկում պէտք է առաջ բերէ, որ իր հերթին անշուշտ առաջ կը բերէ գրականութեան մեծ բարգաւաճում։ Մարգարէ չպէտք է լինել ասելու համար, որ այս մեծ պատերազմից յետոյ սլաւոն ռոման ազգերի գրականութիւնը անչափ կը ծաղկի և մեծ հանճարներ կը ծնէ։ Իսկ առայժմ գրական շուկայում նըկատւում է դատարկութիւն, նորութիւնների կատարեալ բացակայութիւն։ Դա ևս շատ բնական է։ Ամեն ոք զբաղւած է մեծ պատերազմով։ Գրականութեամբ հե-



տաքրքրւող չկայ․ ամենքի ձեռքը լոկ լրագիր է և քարտէզ։ Եթէ գրական գործիչները ունէին էլ աշնան սեզոնի համար պատրաստած գրւածքներ—նրանք այժմ անարժէք են։ Ընթերցողը զբաղւած է միայն պատերազմով և կուզէ կարդալ միայն այն, ինչ քիչ շատ առնչութիւն ունի պատերազմի հետ։ Խմբագիրը, հրատարակիչը, թատրոնի դիրեկտորը․ բոլորը պահանջում են օրւայ հրատապ ստեղծագործութիւններ և քանի որ մեծ, անւանի հեղինակները ընդունակ չեն по заказу ստեղծելու, ուստի մենք տեսնում ենք—գրական շուկայում—դատարկութիւն, պարբերական հրատարակութիւնների էջերում՝ հրատապ պատմւածքներ անյայտ, անծանօթ հեղինակների, իսկ բեմի վրայ՝ հին հայրենասիրական

պիեսներ և կամ այլ և այլ փո-խադրութիւններ։

Ի հարկէ, այս հանգամանքը որոշ չափով բացասական ազդե-ծութիւն է գործում շատ խմբա-գրութիւնների և հրատարակչա-կան ընկերութիւնների համար, հասցնում է նրանց բաւականա-չափ նիւթական վնաս։ Սակայն, կրկնում եմ, սա ժամանակաւոր շփոթութիւն է, որ, անշուշտ, մօտ ժամանակներս կանցնի և տեղի կը տայ մի շարք մեծ և հաճարեղ ստեղծագործութիւնն-րի։

Ս. Համալեան



## ԴՈՒՔ ԿԱՊՐԷՔ ԲԱՅՑ ՆՐԱՆՔ ԿՄԵՌՆԵՆ

(Ճանապարհորդական յուշեր)

—

Իգդիրից էջմիածին էի գնում. Օգոստոսեան այրող արևի ճա-ռագայթներից կիզացած աւազոտ ճանապարհի ամբողջ երկարու-թեամբ, գարնանային անձրևից յետոյ դուրս եկող մրջիւնների կարաւանի նման փռուել էր ան-համար գաղթականների հսկայա-կան հոսանք. որ յորդացած հե-ղեղի նման 10 օրէ ի վեր ցած թափուելով Բարթողեան սարա-լանջերից, յորձնոտ ալիքների նման օղակ-օղակ կոհակներ տա-լով հասել էր մինչև էջմիածնի պարիսպներ...

Սրտառուչ էր տեսարան. փո-շու ամպերի մէջ թաղուած այդ

կիսամերկ և քաղցած քրթնաթոր ամբոխը, որոնց մեծ մասը բեռնաւորուած էր զանազան քուրջ ու փալասներով և մանր երեխաներով, խառնուած շոգից ու փոշուց փորընչացող մանր ու մեծ կենդանիներին, որոնք նոյնպէս բեռնաւորուած էին ինչպէս տէրեր, հազիւ շարժում էին իրենց քաղցից և յոգնածութիւնից ուժասպառ եղած այրուած ոտները.

Մեր թուրք կառապանը, իր անընդհատ «խարարդայով» և մտրակի ճօճումով, հազիւ կարողանում էր մի նեղ արահետ բաց անել այդ թշուառ ամբոխի խիտ շարքերում, որոնք մեր կառքի յանկարծակի երևումից շփոթուած, մի կերպ ճանապարհ տալով նայում էին մեզ ապշած... Կառքը երբեմն սրնթաց, երբեմն դանդաղ, անցնելով այդ անվերջանա-



Դ ր օ

լի պանորամի միջով, առիթ էր տալիս մեզ, այդ խառնիճաղանջ ամբոխի բազմապիսի հոգեկան և ֆիզիքական տանջանքներն ու կենցաղը դիտելու...

Կառքում մենք երկու հոգի էինք, ընկերս մի հայ փոդրադչիկ, վերադառնում էր Ալաշկերտից, ուր ինչպէս ասում էր, ականատես էր եղել աւելի ծայրահեղ սոսկումների, բայց և այնպէս, նա ևս անկարող էր, ի դէմս մեր առջևից սահող այդ դժբաղդ տեսարանների, զսպել իր արցունքներ, որ անզգալի կերպով թափւելով, մատնում էր նրա հոգեկան վրդովմունքը . . .

Մեզ ճնշող թախիծը փարատելու մի քանի անյաջող փորձերից յետոյ, լուռ էինք երկուքս էլ. երբեմն մի որև է նոր երևոյթը, առիթ էր տալիս մեզ,



հարցեր տալ կողքերից անցնող գաղթականներին, որոնցից դեռ պատասխան չստացած, անցնում էր կառքը թողնելով նրանց մեր յետևից նայելիս...

Կայարանն անցանք։ Կառապանը խտացող ամբոխի միջից անցնելու դժւարութիւնից խուսափելու միտումով, կառքը դէպի Ղարխուն դարձրեց, ուր գիւղի կենտրոնում ցած գալով՝ մի նեղ փողոցում անյայտացաւ, նախապէս խորհուրդ տալով մեզ ջրի փոխարէն ձմերուկ վերցնել...

Մինչ մենք մեր ծարաւը հագցնելու հոգսով էինք զբաղւած, վերադարձաւ կառապան, իր հետ բերելով մի նոր թուրք ուղևոր, որը քաղաքավարի կերպով բարևելով և ներողութիւն խնդրելով մեզնից, տեղաւորւեց մեր առաջի նստարանի վրայ...

Մի քանի րոպէից՝ մենք նորից սոշէի վրայ էինք։ Ճանապարհը փակող խիտ բազմութեան դանդաղ շարժումը, արգելում էր մեզ սրնթաց անցնել, իսկ ճանապարհի կողքերը, ամբողջ երկարութեամբ մինչև Էջմիածին, հեռաւոր տեղերից եկած ուխտաւորների նման, թափւել էր գաղթականների ծով բազմութիւն, որոնց ամեն մի խմբակցութեան մէջն էլ հիւանդներ կային, ոմանք ժեշտի կտորների վրայ հաց էին պատրաստում, ոմանք նստած՝ ինչ որ ծամելով հանգստանում, ոմանք լւանում, ոմանք վիճում, իրար թունդ հայհոյում, աչքի էին ընկնում նաև տէրունի և անտէր մեռածներ, որոնց շուրջ հաւաքւած մերձաւորների դառն ողբից, անգութն անգամ կըզգացւէր... Կային հոգեվարքի մէջ ե-



ղող ջահէլ-ջիւան երիտասարդներ, նորատի աղջիկունք և հարսներ, որոնց տէրերի յուսակտուր կանչ ու աղաղակ, երգախառն ողբեր, օգնութիւն կանչող աղերսող հայեացքը, քար կլացացնէր, և մենք լալիս էինք առանց օգնել կարողանալու...

Մեր նոր թիւրք ուղեկիցը նոյնպէս նայում և ինչ որ մրթմրթում էր գլուխը շարժելով, չը գիտեմ ինչու, բայց ինձ թւեց որ նա ներքուստ ուրախանում է, այդ աղէխարշ տեսարանների հանդէպ.

— Ինչպէ՞ս է դուր գալիս, քիրւայ, հարցրի ես, հեգնական տօնով.

— Ի՞նչ պիտի դուր գայ, ասաց թուրքը զարմացած իմ կողմ դառնալով. բայց տեսնելով որ նա էլ է լալիս, մեղմեցի հարցս ասելով.

— Ես ուզում էի ասել, թէ ի՞նչ տպաւորութիւն է թողնում ձեզ վրայ, այս տխուր տեսարանները...

— Շատ վատ, բայց դուք ինչո՞ւ այդպիսի տարօրինակ հարց տուիք... կամ մի՞թէ մենք մարդ չենք, մենք սիրտ, զգացում չունի՞նք, չէ որ մենք էլ ձեզ նման մսից ու արիւնից ենք կազմւած... կամ միթէ՞ կարծում էք, որ, իմ թուրք լինելը, ձեր հայ լինել մի որև է ընական տարբերութիւն է դնում մեր կազմւածքի մէջ...

— Ճիշտ էք ասում. բայց դէ, ես հէնց այնպէս հարցրի, կան մարդիկ, որ տարբեր կերպով են մտածում... և այս բոլոր դըժբաղդութիւնները, հետեւանք են այդ տարբեր մտածելակերպի...

— Ես ձեզ հասկանում եմ, պա՛րոն, ասաց նա, փոքր ինչ



մտածելուց յետոյ, բայց եթէ մի րոպէ ձեր ասած տարբեր մտածողներից ես լինէի, դարձեալ չէի կարող անտարբեր մնալ այս ծով թշւառութեան հանդէպ... Բայց այդ՝ ես սրանց տեսնելով, երեւ կայում եմ այնտեղ մնացողների դրութիւնը... չէ որ սրանք մենակ չէին այն երկրում...

Ես պարո՛ն, ուղտապան եմ եղել և ամբողջ քառասուն տարի իմ ուղտերովս թափառել եմ այն երկիրներ, որտեղից գալիս են այս դժբաղդները, Կասպից ծովից մինչև Սև ծովի ափեր, Միջերկրականից մինչև Պարսից ծովը, իմ ռայոնս է եղել և ես ծանօթ եմ իմ այդ շրջանակի մէջ ապրող բոլոր ժողովուրդների կենցաղին, գիտեմ որտեղ ինչ ժողովուրդ և ինչպէս է ապրում, հէնց այս րոպէին էլ, իմ ուղտերը

որդուս առաջնորդութեամբ ապրող են փոխադրում առաջաւոր դիրքեր...

Քառասուն տարուայ ընթացքում, ես շատ անգամ եմ անցել այդ երկրներով, շատ անգամ ականատես եղել հայ ժողովրդի կրած տառապանքներին, նա շատ անգամ է կոտորուել, կողոպտուել, տանջւել, գաղթել, բայց էլի ապրել է, մի ուրիշ նրա տեղ՝ նրա հարևաններից բոլորովին ոչնչացած կլինէր, բայց ամենքն էլ գիտեն, որ մինչև վերջերքս, էլ հայերի ձեռքումն էր գտնւում այդ երկրի բոլոր հարստութիւնն, արհեստը, վաճառականութիւնը և որ գլխաւորն է գիտութիւնը։ Թիւրքիայում մի հայ գիւղ չէիք գտնի, որ դպրոց չունենար, իսկ քաղաքները բազմաթիւ և բազմատեսակ դպրոցներ ունէին, որոնց



մէջը, այս կողմերից և Ստամբօլից գնացող վարժապետներ, սովորեցնում էին նրանց այն ամենը, ինչ անհրաժեշտ է մի ազգի գոյութիւնը պահպանելու և հարստանալու համար...

Իսկ Թիւրքեր, քիւրդեր, որոնք երկրի տէրն էին, իշխող, և ամեն ինչ կարող էին, եթէ ցանկանային, բայց երևակայեցէք, որ Վանի նման մի կենդրոնական քաղաքում մի կանոնաւոր դպրոց չունէին, ուր մնաց թէ գիւղերը... Աշխարհը լուսաւորուել է, հօ չի կարելի միշտ ալան-թալանով ապրել...

Չէ պարոն, ես թէև ուսում չունիմ, բայց այդ բոլոր հասկանում եմ, և հասկանալով հանդերձ, իմ որդուս դաւաչի (ուղտապան) եմ դարձրել, թէև ես ունևոր էլ եմ... Մի հայ իմ փո-

խարէն իր որդուն համալսարան կուղարկէր... բայց դէ, մենք թիւրքեր ենք, և երեխ թիւրքեր էլ կմնանք...

Մենք միայն կոտորելու մէջ վարպետ էինք, բայց այժմ փորձ ցոյց տւեց, որ այդ ճիւղի մէջն ևս մեզ գերազանցում են... Բա-յազէտից սկսած, մինչև Մուշ ու Բաղէշ, ուր գնում-գալիս են իմ ուղտերս, ոչ մի թիւրք-քիւրդ չի մնացել, եղածն էլ մերկ ու քաղցած, սարերի ծերպերումն են ա-պաստանել, ուր կը ոչնչանան անյայտութեան մէջ...

Այո՛, սարսափելի է այս գաղ-թականների դրութիւնը, սա մի զուլում է, որի առաջ քարի սիրտ ունեցողն իսկ կարտասւի, բայց ես համոզւած եմ, որ սրանք կապ-րեն, որովհետև, սրանք ուսում, արհեստ ունին... Կանցնի այս



պատերազմ, սրանք նորից կվե-րադառնան կվերաշինեն իրենց հայրենիք... բայց նրանք էլ չեն վերադառնայ... Նրանք կոչնչա-նան այս պատերազմում և նրանց միայն անունը կը յիշւի պատ-մութեան մէջ...

—Դուք կապրէք բայց նրանք կմեռնեն...

Ապաղան ձերն է...

Մենք հասել էինք էջմիածին...

Խ. Տ.-Յ.



## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆՒՈՐՆԵՐԸ

—

Զինուորական իշխանութեան ասելով՝ զինագործարաններում աշխատող ֆրանսիացի բանուորների կեանքը ապշեցուցիչ է։ Բանուորները հանգիստ չունին։ Գիշեր-ցերեկ չեն հեռանում մեքենաների մօտից։ Վարձատրութեան չափի մասին ոչ մի հարց չի ծագում. այդ խնդիրը ամենից քիչ է հետաքրքրում բանուորներին։

Կարիկատուրիստ Ֆորենը նկարել է մի խումբ բանուորների կեղտոտ, քրտինքի մէջ լողացող, յոգնած, տանջւած, կեղտոտուած զգեստներով։ Պատկերի տակը գրած է. «Եթէ սա լինէր մասնաւոր ձեռնարկութեան համար, ծրպխսի գործադուլ կանէինք մենք, ընկերներ»։



Վանի հերոս Արամ փաշան

## ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ

(Ըստ Էֆիմերտու)

### 1916 ԹԻՒ

Երբ արևը մարտի 21-ին մանի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Լուսաբերը Կարիճի հետ, որ տունն է հրատի։ Այս տարի շատ պարարտ և առատ կլինի ցորենով և ուրիշ պտուղներով։ Ձմռան սկիզբը ցուրտ և կարկուտ կլինի, մէջը՝ ջերմ, իսկ վերջը՝ բարեխառն։ Գարունը մինչև յունիս ամիսը ցուրտ է ցոյց տալիս, ինչպէս նաև անձրևներ և որոտմունք, բայց յետոյ աղբիւրների ջրերը կպակասեն, այդ պատճառով շատ եղներ կսատկին։ Աշնան հիւանդութիւններ կըսպառնան Աստծուն աղաչենք որ մահտա-



րաժամ չլինի։ Պէտք է քիչ ուտել և գինի խմել։ Այս տարի տենդը կշատանայ և ջերմութիւնից տարբեր հիւանդութիւններ կառաջանան։ Լուսինը երկնքի 8 րդ տան՝ գուշակում է վէճեր ու կռիւներ այլ և այլ մարդկանցից իրենց թագաւորի դէմ, այլ և տարաձայնութիւններ եղբարց և սիրելեաց մէջ, որովհետև այդպէս է ցոյց տալիս Հրատը՝ Երեւակի հետ կցած երկնքի երրորդ տանը։ Գրագրաց և վաճառականաց մէջ կտիրեն խաբէութիւններ, այս պատճառով նրանց կհանդիպի մեծ դժւարութիւն և նեղութիւն, գուցէ և վիշտ։ Արքունի ապաստաւորաց կլինի մեծ վնաս և նեղութիւն, որովհետև 10-րդ տանտէրը Փայլածուն է, որ նայում է դէպի Հրատ։

## ՏԱՐԻՆ ԳՈՒՇԱԿՈՂ ՏԱՆՈՒՏԷՐԸ

(Ըստ Էֆիմերտոս)

Խեցգետինը երբ տանուտէր լինի *), գարունը երկար և քամոտ, ուստի պտղաբերութիւնը կփչանայ, գինին սակաւ, անասնոց և գազանաց անկումն երկրի վրայ արտմութիւնը, անասնոց արօտի սակաւութիւնը, տեղ-տեղ մորեխ, ձմռան թանկութիւն և քամի. հիւանդացողը ցաւից սաստիկ նեղութիւն կկրէ։ Այս տարի ընդհանրապէս ցուրտ կլինի։

*) Այս տարուայ տանուտէրը Խեցգետինն է։



### Լուսնի օրերի գուշակութիւններ

1. Օրը բարի է ամեն բանի, Ադամը նոր ստեղծուեց. սերմանել, տնկել, ճանապարհորդել, հիմք դնել։ Նոյը տապանի սկիզբն այսօր դրաւ։ Մովսէսն այսօր ժողովրդին Եգիպտոսից հանեց։ Գաբրիէլն այսօր ողջոյն տուաւ Մարիամին։ Սօղոմոնը տաճարի սկիզբն այսօր դրաւ։ Ծնածը կարճակեաց կլինի, հիւանդը 14, 21, և 28 օրից յետոյ կառողջանայ, կորածը կգտնուի, արիւն թողնել դեղնութիւն և բորոտութիւն կբերէ, երազն բարին կըկատարուի։

2, Օրը բարի չէ, նախաստեղծն այսօր ընկաւ, Կայէնն այսօր սպանեց Աբէլին, հիւանդը մինչև 12 օր երկմիտ։ յետոյ կըլաւանայ, կորածը մինչև 40 օրում կգտնուի։ տունկ անել, նաւ ուղղել

լաւ է, ծնածը կլինի երկայնա-
կեաց, խոնարհ և շնացող, արիւն
թողնել լաւ չէ, երազն երեք օրից
կը կատարւի։

3. Օրն ամեն բանի բարի է,
Հեղինէն խաչն այսօր գտաւ, Սօ-
ղոմոնն այսօր ծնաւ։ Գնել, վա-
ճառել բարի է, կորածը կգտնւի,
փախածը յետ կդառնայ, ծնածը
շնորհալի և պատերազմող՝ բայց
կարճակեաց կլինի, արիւն թող-
նելը հիւանդութիւն և եռ կը
բերէ. երազը բարին կըկատարւի։

4. Օրը լաւ չէ. մի վաճառիր,
մի գնիր, Նաբուգոդոնոսորն այսօր
տաճար քակեց, Մոգերն այսօր
ընծայ բերին. Հերովդէսը այսօր
Մոգերից խաբւեցաւ. հիւանդը
կմեռնի, ծնածը շնորհալի կլինի
և մեծութեան կը հասնի, արիւն
թողնելը, վնաս է, երազը սուտ է։

5. Օրը ամեն բանի բարի է



մեղուն լաւ կգայ, սերմանել, տըն-
կել, ճանապարհորդել, նաւարկել,
Նոյը այսօր մտաւ տապանը, Սօ-
ղոմոնը տաճար շինեց կորածը
կգտնւի, հիւանդը կառողջանայ,
ծնածը երեխայ հասակում կմեռ-
նի. արիւն թողնելը բարու-
թիւն կբերէ, երազը բարին կը-
կատարւի։

6. Օրը ամեն բանի բարի է,
Տէրն այսօր առաքեալներին քա-
րոզութեան ուղարկեց, մանուկ-
ներին ուսման տալ, գնել, վա-
ճառել, տնկել և սերմանել, լաւ է,
կորածը մինչև 40 օրը կգտնւի,
հիւանդը կառողջանայ, ծնածը
հիւանդոտ՝ բայց բաղդաւոր կլի-
նի. արիւն թողնելը շահաւէտ է,
երազը բարին կըկատարւի։

7. Օրը վատ է. Աստուած այ-
սօր Ադամին և Եւային դրախտից
դուրս արաւ, հիւանդը շատ կնե-

դանայ, ծնածը պիտակոտ, զող և երկարակեաց կլինի, արիւն թողնելը վնաս է, երազը սուտ է։

8. Օրը բարի է. լեզուներն այսօր բաժանւեցան՝ կորածը կըգտնւի, հիւանդը կասկածաւոր է, ծնածը ձայնեղ կլինի և կծերանայ, արիւն թողնելը վնաս է, կերածը չի մարսի և սիրտը կըդողայ, երազը 3 օրից յետոյ կըկատարւի։

9. Օրը բարի է, Քրիստոսն այսօր մկրտւեցաւ. գնել, վաճառել, ճանապարհորդել, երեխայ մկըրտել, թագաւոր տեսնել, մեծի մօտ գնալ, դատաստան մտնել, բարի է, հիւանդը կառողջանայ, ծնածը երկարակեաց կլինի, արիւն թող նելը բարութիւն կբերէ, երազը բարի կըկատարւի։

10. Օրը բարի չէ. բան մի գործիր, ամեն բանից պատրաստ



կաց, մի երդւիր, մազը մի հարթիր, փախածը կդառնայ, հիւանդը կառողջանայ, ծնածը երկարակեաց կլինի, արիւն թողնելը վնաս է, երազն երեք օրից յետոյ կըկատարւի։

11. Օրը բարի չէ. աշխարհը ջրհեղեղով կորաւ, մի գործիր, մի երդնուր, մի երդում տար, ջուր մի մտնիր։ Կէտն այսօր Յովնանին կուլ տւաւ, հիւանդը կըժշկւի, ծնածը շուտ կըմեռնի, արիւն թողնելը վնաս չի, երազը օրը կատարւի։

12. Օրը չար է. մի երդնուր և մի երդւեցներ ամեն բանից զգուշ կաց և աղօթիր, հիւանդը կմեռնի, ծնածը միջակեաց կլինի, արիւն թողնելը շահաւէտ է, երազն երեք օրից յետոյ կըկատարւի։

13. Օրը բարի է. գործել, հիմք դնել, հարսանիք անել. հիւանդը

8 րդ օրը նեղութիւն կկրէ և կփռասի, ծնածը իմաստուն կլինի և կապրի, արիւն թողնելը վնաս է, երազը բարին կատարի։

14. Օրը չար է. մի գործիր, հիւանդը մինչև 15 օր նեղութիւն կկրէ՝ յետոյ կլաւանայ, ծնածը թոյլ կլինի և չար մահ կունենայ, արիւն թողնելը կհիւանդացնէ, երազը 40 օրից կըկատարուի։

15. Օրը բարի է. շինել. տնկել. վաճառել բարի է։ Քրիստոսն այսօր դժոխքն աւերեց, կորածը կգտնուի, հիւանդը 4 օրից յետոյ կփռասուի, ծնածը երկարակեաց և զօրաւոր կլինի. արիւնը թողնել շահաւէտ է, երազն օրը կկատարուի։

16 Օրը բարի է. սերմանել, տնկել, հարսանիք անել, երեխային ուսման տալ, մեծի մօտ գնալ, կորուստը կգտնուի, հիւան-



դը 28 օրէն կառողջանայ, ծնածը գեղեցիկ, երկարակեաց և մեծատուն կլինի, արիւնը թողնելը կփռասէ, երազն երեք օրից կըկատարուի.

17. Օրը բարի է. հիմք դնել, պատերազմել հիւանդը 18 օրէն կլաւանայ, ծնուածը կլինի զուարթ և գեղեցիկ, երազը նոյն օրը կը կատարուի։

18. Օրը բարի է. հարսանիք անել, ճանապարհորդել, հիւանդը կառողջանայ, ծնածը կասկածաւոր և շատախօս կլինի. արիւն թողնել օգտաւէտ է, երազն բարի է։

19. Օրը բարի է. սերմանել, տնկել, երեխային ուսման տալ մեծի մօտ գնալ. հիւանդը կմեռնի, ծնածը բաղդաւոր և հանճարեղ կլինի, բայց աչքեցող լեզուն վատ և վարքով շնացող,

արիւն թողնելը վնաս է երազը բարին կկատարուի։

20. Օրը բարի է. սերմանել, շինել, վաճառել, ճանապարհորդել, մեծի մօտ գնալ, հիւանդը կվնասուի, ծնածը յաղթանդամ խոնարհ և աղօթասէր կլինի, բայց կրակը կամ ջուրը կընկնի, միայն ողորմածասիրութիւնը կազատէ՝ եթէ ունի, արիւնը թողնել վնաս է, երազն էլ սուտ է։

21. Օրը չար է. մի գործիր, մի վաճառիր, մի գնիր, մի երդնուր և մի երդւեցնիր. հիւանդը կմեռնի, ծնածը աղօթասէր կըլինի, արիւն թողնելը առողջաբար է, երազը սուտ է։

22. Օրը չար է. մեղք չգործես, որ չյուզուիս, բայց հիմք դնել, վաճառել, գնել, մանուկ ուսման տալը լաւ է. հիւանդը կառողջանայ. ծնածը երկարա-



կնաց և մեծերին սիրելի կլինի. արիւն թողնելը օգտակար է. երազը բարին կկատարուի։

23. Օրը բարի է. գնել. վաճառել. ճանապարհ գնալ. լաւ է. փախածը կդառնայ, կորածը կը գտնուի, հիւանդը հոգևորք կլինի, ծնածը բարեսիրտ, բաղդաւոր և յաջողակ, արիւն թողնելը շահաւէտ է, երազն 30 օրին կատարուի։

24. Օրը չար է. ամեն բանից պատրաստ կաց, ճանապարհ մի գնալ, մի վաճառեր, մի գնել, մեծի մօտ մի գնալ՝ փախածը կվերադառնայ, հիւանդը կառողջանայ, ծնածը անօգուտ և անվատակ կլինի, արիւն թողնելը լաւ է, երազը սուտ է։

25. Օրը չար է. մի երդնուր, մի երդւեցնիր, տեղ մի գնար, փախածը կվերադառնայ, հիւանդը կմեռնի. ծնածը չէկ, շատամօ-

բուս և ցանկացող կլինի, արիւն թողնելն լաւ է, երազը սուտ է։

26. Օրը բարի է. գործիր, բայց մի երդուիր, փոխ առնել, ճանապարհ գնալ, սերմանել, հարսանիք անել բարի է, հիւանդը վնաս կը կրէ ծնուածը շուտ կմեռնի, արիւն առնելը լաւ է, երազը բարի է։

27. Օրը բարի է. վաճառելու, գնելու, համար. կորածը կգտնուի, հիւանդը կառողջանայ, ծնածը աստուածավախ և բարի կլինի, արիւն թողնելը մահ կպատճառէ, երազը սուտ է։

28. Օրը բարի է ամէն բանի համար, երեխանց ուսմանց տալ, մեծերի մօտ գնալ, հարսանիք անել, կորածը էլ չի գտնուի, հիւանդը չի ապրի, ծնուածը գեղեցիկ և իմաստուն կլինի, արիւն



թողնելը վնաս է, երազը 3-օրից յետոյ կատարուի.

29. Օրը բարի է ամեն բան գործելու համար, տնկել, շինել, հարսանիք անել, հիւանդը կմեռնի, ծնածը հանճարեղ և բաղդաւոր կլինի, բայց արբեցող, լեզուով սիրելի, գործքով չնացող արիւն թողնելը վնաս է, երազը լաւ է։

30. Օրը բարի է, կնքել, պսակել, հիմք գնել ճանապարհ գնալ, կորածը կառողջանայ, ծնուածը բաղդաւոր կլինի, բայց հարբեցող, արիւն թողնելը վնաս է, երազը բարին կը կատարուի։

# ԵՐԱԶԱՑՈՅՑ

## Ա.

Աստուած երազի մէջ տեսնել լաւ է և բարի, ամեն չարից ու փորձանքից կազատուի, թէ աղքատ է կհարստանայ, թէ հիւանդ է կառողջանայ, թէ բանտումն է կազատուի։ Աբեղայ, տեսնելը փառք է, երբեմն էլ կախ։ Ագարակ կարողութեան ընդարձակութիւն է։ Ագռաւ տեսնելը՝ թշնամիք իր վրայ կյարձակուին։ Աթար դարսած մեծամեծ նեղութիւն է։ Աթոռը բարձրութիւն է։ Աթոռի նստելը աստիճանի բարձրութիւն է։ Ալեոր իրեն տեսնելը՝ շատ երկար կապրի։ Ակներ գոյնզգոյն՝ բարեկամ իշխանաւորներ են։ Աղ տեսնելը՝ սգոյ նշան է։ Աղքատը շատ՝ կուի խափանումն է։ Աղբակոյտ տեսնել՝ նեղսրտութեան մէջ կընկնես։ Ա-



ղանին՝ շնորհք է։ Աղբիւր՝ շատ բաներից օգտուելու նշան է։ Ցամաքած աղբիւր եկամուտի պակասութիւն է։ Աղբիւրից ջուր խմել՝ բարու կհանդիպես։ Աղբիւրից ջուր տանել՝ շնորհի կարժանանաս։ Աղեղ տեսնել՝ բարութեան նշան է։ Աղի ձուկը՝ հոգս և կսկիծ է։ Աղուէսը՝ թշնամուց երկիւղ կպատաուի։ Աղուէսին որսալ, թշնամուդ կյաղթես։ Աղջիկ տեսնել՝ բաղդ և խնդութիւն է։ Աղջիկ ամուսնացնել, հոգսերի թեթևացումն է։ Մեռած աղջիկ տեսնել՝ բաղդի կործանումն է։ Աղքատին հիւրասիրել՝ օրհնութիւն կվայելես։ Աղքատին հալածել՝ բաղդիդ կհարուածես։ Ամպ, հոգսերի կուտակումն է։ Ամպի գոռալ՝ թշնամուց վնաս կգայ։ Այգի տեսնել, հարստանալու նշան է։ Այծը, թշնամի է։ Անա-

պատ տեսնել զուր յոյսեր են։ Անապատի մէջ լինել, անվերջ աղքատութիւն է։ Անդամալոյծ տեսնելը՝ անբաղդութիւն է։ Անթառամ ծաղիկը, բաղդի նորոգումն է։ Անկողին մտնել, բաղդի հետ կհաշտուի։ Անկողնից դուրս գալը, ծանրութիւնից կազատուի։ Անձրևը. անսահման բարիք է։ Անտառը, անհատում բաղդաւորութիւն է։ Անօթ ժանգոտ կամ կոտրած, յոյսերի խորտակումն է։ Աչք արտասուալից, երկարատև ուրախութիւն է։ Աչք փակել, անբաղդութեան հետևել է։ Աչքի կուրանալը, բաղդից զրկուել է։ Աչքի հանելը, կնոջ կամ որդու մահ է։ Ապարանջան, նեղութիւն է, թևին անցկացնել վիշտ է։ Ապուր ուտել, բաղդի կարժանանայ։ Առիւծը, մեծ մարդ է, շըղթայակապ, իշխանութեան ան-



կում։ Առիւծ թէ պատառեց, կեանքիդ վերջն է։ Առիւծին հեծնել, մեծ բաղդի կարժանանայ։ Առու տեսնել, մեծ շահ է և օգուտ։ Առուի ցամաքել՝ շահերի պակասումն է։ Աստղ տեսնել, լաւ է, շատ աստղեր տեսնել, ճանապարհ գնալ և շահել է։ Ատամի ցաւելը, դժբաղդութեան նշան է։ Ատամի հանել, տանը մահ կպատահի։ Ատամի կոտրելը, դժբաղդութեան կը հանդիպես։ Արախչին գլխին ծածկել, գեղեցիկ կին կառնի։ Արխալուղ հագնել, կնոջ հաւատարմութիւն է։ Արաղ խմել, տրտմութիւն է և կսկիծ, Արևի խաւարում մեծ մարդի մահ է։ Արիւն առնելը, հոգսերից կըթեթևանայ, Արծաթ դրամը բարիքների կպատահես։ Արծաթը. ընտանիքի ծանրութիւն և հոգս է։ Արծիւ տեսնել, բարձր աստիճա

նի կհասնես։ Արծիւ տան մէջ տեսնել, մեծ փառք է։ Արծիւ որսալը յաղթանակ կտանես։ Արծւի թեւերին նստել, բարձրութեան կհասնես։ Արջ տեսնելը մեծ մարդից երկիւղ կայ։ Արջին սպանելը, վտանգից կազատւիս։ Արտ ցանելը, բարեյուսութեան նշան է։ Արտ կանաչ, ընտանիքի բաղդաւորութիւն է։ Արօր շինելը, ապագայի յոյս է։ Արօրով վարելը, լաւ է։ Աւազակին սպանել, վըտանգից կազատւես։ Աւազան, լաւ է, ջրով լիք, առատութիւն է։ Աւազանի մէջ լուացւելը շնորք կստանաս։ Աւետարան տեսնել, մուրազ է։ Աւետարան համբուրել, ուխտը կկատարւի։ Աւերակ, ձախորդութեան նշան է։

Բ.

Բրինձը տեսնել, հարստութիւն և գանձ է։ Բուրվառ, հակառա-



Հայ կամաւորների երդումը

կութեան նշան է։ Բուրդ սպիտակ և կարմիր, բարի է և լաւ, սկ սև, չար է և վնասակար։ ու տեսնել, նեղութիւն է։ Բուի այն լսել, դժբաղդ լուր է։ Բոջոտութիւն, ոմանց ասելով շահ կ, ոմանց վնաս։ Բողկ, քաղել ամ ուտել կսկիծ է։ Բաղը, մեծ մարդ է, կամ վաստակ։ Բաղէ տեսնել, հակառակորդից զգուշացիր։ Բաժակ լից, գործից յաջողութիւն է, իսկ դատարկ անյաջողութիւն։ Բահը, վատ է։ Բաղ տնկելը շահ ստանալու յոյս է։ Բամբակը, բարի է։ Բանտ նստել, նեղութիւն է։ Բանալին, լաւ է։ Բանջար քաղել, բարի և լաւ է։ Բարեկամի հետ կռուել, սիրոյ նշան է։ Բարեկամին մեռած տեսնելը, խնդութիւն է։ Բարձր տեղեր թռչելը, մեծութեան կըհասնիս։ Բարձրից ընկնել, աստիճա-



նից զրկուել է։ Բեռ շալկելը, ծանր հոգսերի տակ կմտնիս։ Բոբիկ մանգալը, թշնամիդ կզօրանայ։

## Գ.

Գայլը թշնամի է։ Գազարը լաւ է, ուտել շահաբեր։ Գանկ տեսնել, վիշտ է։ Գանձ տեսնելը շահաբեր գործ է։ Գառը տեսնել, լաւ է։ Գառ մորթել, գործին վնաս գայ։ Գաւազան ձեռքին բռնել, պատիւ է։ Գիւղացի տեսնել բարութեան կհանդիպես, Գերանի կտրուել, տան մեծ կմեռնի, Գերեզման փորելը յանկարծակի մահ է։ Գերեզմանի վրայ լաց լինելը, մեծ ուրախութիւն է։ Գզիրի կանչելը մեծաւորից վնաս կգայ։ Գինի խմել, աչքալիս է։ Գինդ ունենալ ականջին, զաւակ կծնուի։ Գիր գրելը, շատ բարի է։ Գլուխ սանրել չար բաղդ

կութեան նշան է։ Բուրդ սպիտակ և կարմիր, բարի է և լաւ, ակ սև, չար է և վնասակար։ ու տեսնել, նեղութիւն է։ Բուի այն լսել, դժբաղդ լուր է։ Բոջոտութիւն, ոմանց ասելով շահ կ, ոմանց վնաս։ Բողկ, քաղել ամ ուտել կսկիծ է։ Բաղը, մեծ մարդ է, կամ վաստակ։ Բաղէ տեսնել, հակառակորդից զգուշացիր։ Բաժակ լից, գործիդ յաջողութիւն է, իսկ դատարկ անյաջողութիւն։ Բահը, վատ է։ Բաղ տնկելը շահ ստանալու յոյս է։ Բամբակը, բարի է։ Բանտ նստել, նեղութիւն է։ Բանալին, լաւ է։ Բանջար քաղել, բարի և լաւ է։ Բարեկամի հետ կռուել, սիրոյ նշան է։ Բարեկամին մեռած տեսնելը, խնդութիւն է։ Բարձր տեղեր թռչելը, մեծութեան կըհասնիս։ Բարձրից ընկնել, ատիճա-



նից զրկուել է։ Բեռ շալկելը, ծանր հոգսերի տակ կմտնիս։ Բոբիկ մանգալը, թշնամիդ կզօրանայ։

Գ.

Գայլը թշնամի է։ Գազարը լաւ է, ուտել շահաբեր։ Գանկ տեսնել, վիշտ է։ Գանձ տեսնելը շահաբեր գործ է։ Գառը տեսնել, լաւ է։ Գառ մորթել, գործին վնաս գայ։ Գաւազան ձեռքին բռնել, պատիւ է։ Գիւղացի տեսնել բարութեան կհանդիպես, Գերանի կտրուել, տան մեծ կմեռնի, Գերեզման փորելը յանկարծակի մահ է։ Գերեզմանի վրայ լաց լինելը, մեծ ուրախութիւն է։ Գզիրի կանչելը մեծաւորից վնաս կգայ։ Գինի խմել, աչքալիս է։ Գինդ ունենալ ականջին, գաւակ կծնուի։ Գիր գրելը, շատ բարի է։ Գլուխ սանրել չար բաղդ

է։ Գլուխը լուանալը, սուգ է և կսկիծ։ Գլուխ թրաշել, ժահու բոթ կլսես, Գողին սպանել, թշնամուդ կտապալես։ Գոմ շինել, մեծ շահ է և ուրախութիւն։ Գոմէշ արածել, լաւ է։ Գոյնզգոյն հալաւը ցնծութիւն և ուրախութիւն է։ Գորտի ձայն լսել, պատերազմի համբաւ է։ Գութան շինելը մեծամեծ բարիք է երկրին։

Դ.

Դագաղ տեսնել, չարագուշակ լուր է։ Դագաղում իրան տեսնել, շատ կապրի։ Դավուլ զարնել, խռովութիւն է։ Դարման, լիութիւն է։ Դդումը, նեղութիւն և հիւանդութիւն է։ Դեղձ ուտելը, առողջութիւն է և լաւ։ Դև տեսնելը, թշնամուց պէտք է զգուշանալ։ Դմակ ուտել ծանր հիւանդութիւն է։ Դրամ գտնելը, բաղդ և յաջողութիւն է։ Դրացու



հետ սեղան նստել, անբաւականութիւն է։

Ե.

Եափունջի տեսնել, հոգսերի երևումն է։ Եզ տեսնել հիւանդութիւն է։ Եկեղեցի շինել մեծ փառք է։ Եղ տեսնել կամ ուտել, բարւոյ կհանդիպի։ Եպիսկոպոս տեսնելը, մեծ շնորքի կարժանանայ։ Երգի ձայն լսելը մեծ աւետիք է, Երես լուանալ, ծանրութիւններից կազատուի։ Երազի մէջ երազ տեսնել բարի է և լաւ։

Զ.

Զանգակը, բարի համբաւ է։ Զինւոր դառնալը թշնամու դէմ յաղթող կհանդիսանայ։ Զուռնայ ածելը ուրախալի համբաւ է։ Զօրք և զօրագունդ, ցաւ և հիւանդութիւն է։ Զաֆրան, հիւանդութիւն է։

Է.

Էշ տեսնելը, դովլաթ է, ըստ ոմանց նեղութիւն։ Էրան անելը, տանը բարիք կաւելանայ։ Էրըժնակ ջաղել կամ ուտել՝ լաւ է։ Էրկանք աղալը, հեռու տեղից ձայն կլսես։

Ը.

Ըղունկ կտրելը ցաւի կհանդիպի։ Ընծայ տալ, մեծ բարիք է։ Ընկոյզ հաւաքել կամ ուտել, հիւանդութիւն է։

Թ.

Թագաւոր տեսնել, մեծ բարիք է։ Թագ տեսնել, փառքի կարժանանաս։ Թագուհի տեսնել, շնորհ է։ Թաղայ հաց տեսնել, հիւանդը կառողջանայ։ Թաղի տեսնելը, փոքրիկ անյաջողութիւն է։ Թախտ նստելը, մուրազը կկատարուի։ Թան խմելը, դրութիւնը կապահովուի։ Թառ ածելը, բարի լուր



կլսես։ Թարխունը, կսկիծ է։ Թեղ անելը, լաւ է։ Թթու ուտելը, կսկիծ է։ Թոնիրը, լաւ չէ։ Թութուն ծխելը, վիշտ է։ Թուխս իր ճուտերով, հարստութիւն է։ Թուրը, կռւի նշան է։ Թուրք տեսնելը, գործին խարդախութիւն է, Թռչել բարձր, լաւ է, ցածր վատ է։

Ժ.

Ժամ շինելը, բարի է։ Ժամ գնալը, երկար կեանք է։ Ժամաբար տեսնել, յաջողութիւն է։ Ժամհարը, նեղութիւն է։ Ժամացոյցը, աւետիք է։ Ժայռը, հաստատուն յոյս է։ Ժողովը խռովութիւն է։

Ի.

Իժ տեսնելը, ոխերիմ թշնամի է։ Իրեն տրտում տեսնելը, ուրախութիւն է։ ուրախ տեսնելը, տրտմութիւն է։

Լ.

Լակլակ տեսնելը, բարի է։ Լէկզի տեսնել։ վատ է, Լաց լինել, ուրախութիւն է։ Լաւաշ հացը, մեծ պատիւ է։ Լիք ամանը բարիք է։ Լոյս խաղաղութիւն է։ Լւացք անելը, նեղութիւն է։ Լուսին տեսնելը, լաւ է։

Խ.

Խալի գործել, լաւ է, աջողութիւն է։ Խաղող քաղելը, լաւ է։ Խաղող ուտելը, լաց է, սպիտակ խաղող, լաւ է։ Խանչալ կրել, քաջութիւն է, Խաչը յաջողութիւն է։ Խաչ համբուրել, մուրազ է։ Խաչվառը, լաւ չէ։ Խիարը, լաւ է, ուտելը հիւանդութիւն է։ Խըմոր հունցելը, լաւ է։ Խնձոր քաղելը, ուտել, շատ լաւ է, Խնոցի հարելը բարիք է։ Խող անյաջողութիւն է։ Խողի միս ուտելը, հիւանդութիւն է։ Խոտ կրելը,



լաւ է։ Խորոված ուտելը, հիւանդութիւն է։ Խունկը, բարի է։

Ծ.

Ծաղիկ քաղելը լաւ է։ Ծաղիկ հոտոտելը բաղդը կբացուի, Ծաղիկ փնջել, մուրազ է։ Ծառ տնկելը, յոյս է։ Ծաղկած ծառը. մեծ ուրախութիւն է։ Ծառ բարձրանալը, լաւ է։ Ծերունի տեսնել, բարի է։ Ծիծ ուտել, հիմնական բարիք է, Ծիրան ուտել. հիւանդութիւն է։ Ծով ալեկոծեալ խըռովութիւն է։ Ծով հանդարտ, խաղաղութիւն է։ Ծով ընկնել, անյաջողութիւն է, դուրս գալ ապահովութիւն է։ Ծուխ, լաւ չէ։

Կ.

Կաթ խմելը, լաւ է։ Կաթուղիկէ տեսնել, աստիճանի բարձրացումն է։ Կաթողիկոս տեսնել, լաւ է։ Կալ տեսնել, բարիք է։ Կամուրջ շինելը, գործի յաջողու-

թիւն է։ Կայծակի ձայն լսելը, խռովութիւն է։ Կատաղած կենդանի տեսնել, վտանգի կհանդիպիս։ Կանթեղ վառւած տեսնել, ընտանիքի խաղաղութիւն է։ Կատու տեսնել, նախանձոտ մարդից զգոյշ կաց։ Կատուին սպանել, կինդ կմեռնի։ Կարագ ուտելը, լաւ է։ Կարկուտը, անբաղդութիւն է։ Կացին տեսնել, վատ է։ Կերակուր եփելը, փորձանք է։ Կապիկ տեսնել, խարդախ մարդից զգոյշ կաց։ Կառք նստել, լաւ է։ Կին առնել, լաւ է։ Կշեռքը, թանգութեան նշան է։ Կողակ ձուկ. հիւանդութիւն է։ Կովը բարիք է, ըստ ոմանց հիւանդութիւն է։ Կոյսի հետ խօսելը, երջանկութիւն է։ Կռունկ տեսնել, բարի գործ է։ Կրակ տեսնելը, փորձանք է։



Հ,

Համբուրւելը, բարի լուր կլսես։ Հալւայ ուտելը, հիւանդութիւն է։ Համեմ քաղելը կամ ուտել, բարի է։ Հայելի տեսնել, մաքուր վաստակ է։ Հասկ քաղելը, ուրախութիւն է։ Հարսանիք տեսնելը, խռովութիւն է։ Հաւ տեսնելը, հիւանդութիւն է։ Հեղեղը, աւերմունք է։ Հերկ անելը, լաւ է։ Հիմք փորել, յաջողութիւն է։ Հիւանդ տեսնել, վատ է։ Հրեշտակ տեսնելը, մեծ բարիք է։

Ձ

Ձեռք լւալը, արդարութեան նշան է։ Ձէթը լաւ է։ Ձի հեծնել մուրազ է։ Ձիւնը, հալալաշխատանք է։ Ձմերուկ ուտելը, լաւ է։ Ձու, հակառակութիւն է։ Ձաւար ծեծելը թշնամուդ կյաղթես, ներկած ձու, բամբասանք է։ Ձուկը, չար լեզու է։

Ղ.

Ղավուրմայ ուտելը, խիստ արտնեղութիւն է։ Ղափլան տեսնելը, զօրաւոր թշնամի է։ Ղասապը, խռովութիւն է։ Ղաւալ ածելը, ուրախութիւն է։ Ղումաշ հագնելը, հարստանալու նշան է։ Ղաւուն ուտելը, հիւանդութիւն է։

Ճ.

Ճաշակել, սրբութեան նշան է։ Ճառ ասելը, մեծ համբաւ ստանալ է։ Ճանապարհ գնալը, բարի է։ Ճրագ վառուած, բաղդաւոր զաւակներ ունենալու նշան է։ Ճրգնաւոր տեսնելը, բարի է։

Մ.

Մարգարիտ տեսնելը, շնորհք կըստանաս։ Մազ կտրելը, վատ է։ Մածուն ուտել, ապահովութիւն է։ Մեղր ուտելը, հիւանդութիւն է։ Մեռած ազգականին տեսնել, նամակ կստանաս։ Մեռելի հետ



խօսելը, մահու սպառնալիք է։ Միս ուտելը, հիւանդութիւն է։ Մուկ տեսնելը կռիւ է։ Մերկ լինելը, զրկանք է։ Մոլայ տեսնելը, վատ է։ Միխակը, լաւ է։ Մախիրը , նեղութիւն է։

Յ.

Յոպոպը, վատ է։ Յոպոպը տանիքի վրայ, մահուան գոյժ է։

Ն.

Նամակ գրելը, բարի լուրի կսպասես։ Նապաստակ տեսնելը, վախկոտ թշնամի է։ Նաւ տեսնելը, օտարութեան կգնաս։ Նիզակը վրէժխնդրութիւն է։ Նուռ, գանձ և հարստութիւն է։

Շ.

Շամամը, բարեբաղդ վիճակ կունենաս։ Շագանակ ուտել, նեղութիւն է։ Շան հաչելը, յանդիմանութիւն է։ Շահը տեսնելը, մեծ բարիք է։ Շաքար ուտելը,

նեղութիւն է։ Շիպը վատ է։ Շուրջառ ծածկելը, առողջութիւն է։

Ո.

Ոսկին, շահ ու վաստակ է։ Ոսպ քաղելը, հոգսերից կազատուես, Ուլ տեսնելը, բարեյաջող դիպուած է։ Ուղտը, թշնամի է։ Ոչխարը սպիտակ լաւ է, սեւ վատ է։ Ուխտ գնալը, մուրազ է։ Ուրագ ձեռքում, գործի յաջողութիւն է։

Չ.

Չամիչ ուտելը, վատ է։ Չարուխ հագնելը, ճանապարհորդութեան նշան է։ Չուխայ հագնելը, բաղդաւորութեան նշան է։ Չորթանը, հիւանդութիւն է։ Չէչոտ մարդ տեսնելը, գործերի ձախորդութիւն է։ Չայ խմելը, փորձանքից կազատուես։



Պ.

Պաս ուտելը, անյաջողութիւն է, Պանիր ուտել նեղութիւն է։ Պապին տեսնելը, պատուի նշան է։ Պապի հետ խօսելը, օրհնութիւն է։ Պառաւ տեսնել նեղութիւն է։ Պատ քանդելը, ընտանիքին փորձանք գայ։ Պղպեղը, կսկիծ է։ Պսակւել, լաւ է։

Ջ.

Ջաղաց շինելը, մեծութիւն է. Ջհուդ տեսնելը, անյաջողութիւն է։ Ջուր խմելը, լաւ է։ Ջրում լողանալը, թեթեւութիւն է։ Ջորի տեսնելը, վատ է։

Ռ.

Ռեհան քաղելը, որդի կունենաս։ Ռոճիկ ստանալը, լաւ է, Ռում տեսնելը, թարսութիւն է. Ռօմ խմելը, կսկիծ է։

Ս.

Սապոնը, կսկիծ է։ Սապոն

գործածելը, մահու կսկիծ է։ Սար բարձրանալը լաւ է։ Սանդուխը, մեծութիւն է։ Սագ տեսնելը, լաւ է, միսն ուտելը, հիւանդութիւն է։ Սաղ ածելը, վիշտ է։ Սիւն յոյս է, Սխտոր կսկիծ է։ Սուրբ տեսնելը, յաջողութիւն է։ Սև հագնելը. վատ է։ Սայլին նստելը, նեղութիւն է։ Սիրամարգ տեսնելը, լաւ է։ Սոխը, վատ է։

Վ.

Վարդ քաղելը, կամուսնանաս. Վարդ փնջելը, կհարստանաս։ Վիշապը, մեծութիւն է, կամ վնաս։ Վերմակը, հարուստ կին է։ Վարդապետ տեսնելը, լաւ է, Վագր տեսնելը, որինահեղութիւն է։ Վազ տնկելը, յաջողութիւն է։

Տ.

Տախտը՝ մեծութիւն է։ Տուն շինելը, շատ լաւ է։ Տաճիկ տեսնելը, լաւ չէ։ Տուն փուլ գալը,



Համազասպ

փորձանք է։ Տէրտէր զգեստաւորուած, բարիք կստանաս։ Տուղտ տեսնել, ամաչկոտ կին կունենաս։ Տիկ տրտմութիւն է։ Տառեխ, մտատանջութիւն է։ Տանձ ուտելը, հիւանդութիւն է։ Տիրուհու հետ խօսելը, շատ լաւ է։

Ց.

Ցիցը, չար լեզու է։ Ցախաւելը, բարի նշան է։ Ցորէնը խաղաղութիւն է։ Ցեխը տրտմութիւն է։ Ցանք անել, ապահով վիճակ է։

Փ.

Փեթակ, լաւ ապագայ է։ Փայտ կտրել բարի է։ Փոխինդ ուտելը լաւ է, և վատ։ Փողի ձայն լըսելը, ուրախութիւն է։ Փող վատ է, կտրել՝ թշնամիների կորուստ է։ Փող գտնելը, յաջողութիւն է։

Ք.

Քաղաք տեսնել, լաւ է։ Քաչալ տեսնել, անյաջողութիւն է։ Քար



ժողովել, քեզ կբանբասեն։ Քացախը, դառն խօսքեր կլսես։ Քոս մարդ տեսնել, ձախորդութիւն է։ Քիւրդ տեսնելը, լաւ չէ։

Օ.

Օժիտ ստանալ լաւ է։ Օծուել անուշահոտ իւղերով, յաջողութիւն կը գտնես և անունդ կտարածուի։ Օձ տեսնել վատ է, զգոյշ կաց թշնամիներիցդ։ Օղի խմելը, վատ է, ըստ ոմանց. ուրախութիւն է։ Օդի մէջ թռչել, լաւ է։

## ԲԱՆՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Օրավարձի հաշւարար*

| Ամսական | Օրավարձ | Ամսական | Օրավարձը պէտք է լինի | | Ամսական | Օրավարձը պէտք է լինի | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ր. | Կոպ. | Ր. | Ր. | Կոպ. | Ր. | Ր. | Կոպ. |
| 5 | $16^{3}/_{2}$ | 23 | — | $76^{2}/_{3}$ | 41 | 1 | $36^{2}/_{3}$ |
| 6 | 20 | 24 | — | 80 | 42 | 1 | 40 |
| 7 | $23^{1}/_{3}$ | 25 | — | 8 3/3 | 43 | 1 | $43^{1}/_{3}$ |
| 8 | $26^{2}/_{3}$ | 26 | — | $86^{2}/_{3}$ | 44 | 1 | $46^{2}/_{3}$ |
| 9 | 30 | 27 | — | 90 | 45 | 1 | 50 |
| 10 | $33^{1}/_{3}$ | 28 | — | $93^{1}/_{3}$ | 46 | 1 | $53^{1}/_{3}$ |
| 11 | $36^{2}/_{3}$ | 29 | — | $96^{2}/_{3}$ | 47 | 1 | $56^{2}/_{3}$ |
| 12 | 40 | 30 | 1 | — | 48 | 1 | 60 |
| 13 | $43^{1}/_{3}$ | 31 | 1 | $3^{1}/_{3}$ | 49 | 1 | 63[illegible] |
| 14 | $46^{2}/_{3}$ | 32 | 1 | $6^{2}/_{3}$ | 50 | 1 | $66^{2}/_{3}$ |
| 15 | 50 | 33 | 1 | 10 | 51 | 1 | 70 |
| 16 | $53^{1}/_{3}$ | 34 | 1 | $13^{1}/_{3}$ | 52 | 1 | $73^{3}/_{3}$ |
| 17 | $56^{2}/_{3}$ | 35 | 1 | $16^{2}/_{3}$ | 53 | 1 | $76^{2}/_{3}$ |
| 18 | 60 | 36 | 1 | 20 | 54 | 1 | 80 |
| 19 | $63^{3}/_{3}$ | 37 | 1 | $23^{2}/_{3}$ | 55 | 1 | $83^{1}/_{3}$ |
| 20 | $66^{1}/_{2}$ | 38 | 1 | $26^{2}/_{3}$ | 56 | 1 | $86^{2}/_{3}$ |
| 21 | 70 | 39 | 1 | 30 | 57 | 1 | 90 |
| 22 | $73^{1}/_{2}$ | 40 | 1 | $33^{1}/_{3}$ | 58 | 1 | $93^{1}/_{3}$ |

## ԲԱՂԴԱԳՈՒՇԱԿ

| | |
|---|---|
| ԽՈՅՆ | ՁՈՒԿ |
| ՋՐՀՈՍ | ԱՅԾԵՂՋԻՒՐ |
| ԱՂԵՂՆԱՒՈՐ | ԿԱՐԻՃ |
| ԿՇԻՌ | ԿՈՅՍՆ |
| ԱՌԻՒԾ | ԽԵՑԳԵՏԻՆ |
| ԵՐԿԱՒՈՐ | ՑՈՒԼՆ |

## Խ Ո Յ Ն

Ո՛վ մարդ, ինչպէս արևի լոյսը կեանք և կենդանութիւն է տալիս աշխարհին, այնպէս էլ, յաջողութիւնդ, ուրախութիւն և բաղդաւորութիւն կբերի քեզ։ Ինչի մասին, որ մտածում ես, կատարւի, միայն զգուշ կաց չըշեղուես արդարութեան ճանապարհից, և երբէք չմեծամտես, որովհետև ամբարտաւանութիւնը հակառակ է Աստուծոյ։

## Ձ Ո Ւ Կ

Ո՛վ մարդ՝ քո դժուարութիւնն անցաւ։ Երևում է, ու պիտի ուրախանաս, որովհետև այժմ քեզ բարի է մօտենում. Ինչ որ մըտքումդ դրել ես սկսիր, յաջողութիւն կունենաս։ Քո հակառակորդներդ կըտկարանան, աշխատիր քո արդարամտութեամբդ ի դերև հանել նրանց բամբասանքները։ Բարեկամներդ կեղծ են և քեզ սրտանց նախանձող։ Բայց դու նպատակիդ կհասնես։



## Ջ Ր Հ Ո Ս

Ո՛վ մարդ՝ բաղդաւոր էիր, բայց մերձաւորներիդ հետ ունեցած գժտութիւնը քեզ զրկեցրեց և դու պանդխտացար։ Այժմ թէև արտաքուստ երևում ես անհոգ, բայց ներքուստ տանջւում ես, զուրկ ամեն տեսակ մխիթարութիւնից։ Խօսք մեր մէջ, դու արժանի էլ ես այդ վիճակին, որովհետև սրտումդ օձեր են պար գալիս, չափից դուրս նախանձոտ ես. ուզում ես հնձել այն տեղից, ուր երբէք չես ցանել։ Փախչում ես արդար միջոցներից, և միշտ անարդար միջոցների ես դիմում. դարձիր դէպի արդարութիւնը, և դու նորից բաղդաւոր կլինես։

## ԱՅԾԵՂԻՒՋՐ

Ո՛վ մարդ՝ միայն Աստուած կարող է քեզ օգնել, քո բաղդ փըլթրուկ է, դու դեռ շատ վշտեր կըկրես, շատ դժբաղդ օրեր կտեսնես, մեծ տրտմութիւն կգայ քեզ սիրելիներիցդ, կհիւանդանաս, բայց շուտով կառողջանաս. կաղքատանաս բայց յոյսդ Աստուծոյ և բազուկներիդ վրայ որ դնես, նորից դրութիւնդ կբարւոքւի և շատերը քեզ կը նախանձեն. յամենայն դէպս մի տրտմիր, որովհետև վերջդ բարի է, Թող Աստուած քեզ համբերութիւն տայ։

## ԱՂԵՂՆԱՒՈՐ

Ո՛վ մարդ՝ քո խորհուրդը բարին կատարեցաւ, արա ինչ որ կամենում ես, դու կուրախանաս քո յաջողութեամբ, թէ հիւանդ ունիս կառողջանայ, թէ նեղութեան մէջ ես կազատուես, թէ



աղքատ ես կհարստանաս, թէ աղջիկ ես կբաղդաւորուես գեղեցիկ և հարուստ փեսայի գնալով, թէ ծնող ես քո որդոց փառքով կփառաւորուես, միայն բարի սիրտ ունեցիր. ինչ որ քեզ ես ուզում, ցանկացիր և ուրիշին և մի փոքր համբերութիւն ունեցիր, մինչև քո խնդրուածքդ կատարուի, երանի քեզ։

## Կ Ա Ր Ի Ճ

Ո՛վ մարդ՝ զգուշացիր, որովհետև մէկ, կայ որ արտաքուստ քեզ բարեկամ է, բայց միշտ աշխատում է կարիճի նման խայթել քեզ. իբրև բարի խորհրդատու՝ միշտ դէպի չարն է առաջնորդում քեզ, նրա աչքերը կապոյտ են, մազերը սև, գոյնը փոփոխական, այդ տեսակ մարդը ոչ ոքի բարիք չի կամենայ, այլ ուրիշի անկման մէջն է որոնում իր ապահովու-

թիւնը. Թող այն միտքը, որ նա է յղացել քո մէջ, և եթէ քիչ համբերութիւն ունենաս, ինչ որ կամենաս կկատարուի։

Կ Շ Ի Ռ

Ո՜վ մարդ՝ աւետիք տամ քեզ. որովհետև ինչ որ խորհել ես այնպէս էլ կկատարուի և դու շատ կուրախանաս։ Քո սիրտդ բարի լինելով, ուրիշներին միշտ բարի կամեցար, այդ պատճառով. քո ցանկացածի պէս կվարձատրուիս. բայց զգուշացնում եմ քեզ, որ խորհուրդդ ամեն մարդու մի յայտնիր. զգուշ կաց նաև կեղծաւորներից, որոնց բարեկամութիւնը ոչ ոքի վնասից զատ օգուտ չի տուել, աւելի լաւ է անկեղծ թշնամի ունենալ քան կեղծաւոր բարեկամ, այնուամենայնիւ ապահով եղիր, որ քո դէմ որոգայթ լարող՝ ինքը մէջ պիտի



ընկնի։ Ինչ գործ որ սկսես՝ յաջողութիւն կգտնես, ինչի որ ձգտես կը հասնես, ինչ ցանկանաս կը կատարուի... բաղդաւոր մարդ ես... երանի՜ քեզ։

Կ Ո Յ Ս Ն

Ո՜վ մարդ՝ թէև դրութիւնդ բաւական դժուար է, բայց մի յուսահատուիր, ինչպէս դաժան ձմրան յաջորդում է բեղմնաւոր գարուն, այնպէս էլ, քո ներկայ տխրութեանդ կը յաջորդի, ուրախ օրեր, և դու եթէ ուրիշների համար նախանձելի էլ չը լինես, այնուամենայնիւ գոհ կը մնաս քո դրութիւնից, այնպէս որ ապագան աւելի լաւ կլինի քո անցեալից. հիւանդդ կառողջանայ, հեռաւորդ կվերադառնայ։

Ա Ռ Ի Ւ Ծ

Ո՜վ մարդ՝ ինչ պէս երևում է քո սրտի ցանկութիւն կը կատար-

ւի, և դու կուրախանաս, քո ու-
րախութիւնը կրկնակի կը լինի,
մանաւանդ՝ որ մի ուրախ առիթ
և շահաբեր լուր պիտի լսես, բայց
դու պարտաւոր ես պատրաստ
լինել, քո առաջդ մի անխուսա-
փելի կռիւ կայ, որից եթէ յաղ-
թող դուրս գաս, բաղդաւոր կլի-
նես, քո ույժերից է կախուած
յաղթանակդ, իսկ յաղթանակից
կախուած է բաղդդ։

ԽԵՑԳԵՏԻՆ

Ո՛վ մարդ՝ զգուշացնում եմ
քեզ. թող այդ մտքերը, զուր տեղ
ուրիշների ձեռին խաղալիք մի
լինիր, կը խայտառակուիս, նը-
պատակիդ չես հասնիր, աւելի
լաւ է, որ վերմակիդ չափով ոտ-
ներդ մեկնես. Ողորմելի, քո այդ
խորհրդատուներ, որ քեզ հետ
ուտում խմում և խրախուսում
են, նրանք իրանց շահն ունեն, այդ



պատճառով՝ քեզ գործիք դարձ-
րած մէջ են գցեր. բայց դու՝ յի-
մարաբար հաւատում ես նրանց
քեզ տուած գովասանքին, և փըք-
ւում ապուշ հնդկահաւի նման։

ԵՐԿԱՒՈՐՆ

Ո՛վ մարդ՝ քո աղօթքդ ընդու-
նելի եղաւ, ուստի ինչ որ խոր-
հել մտածել ես, կկատարւի, խոր
հուրդդ բարի է, դու հարամ սի-
րել չես կարող, այդ պատճառով
մի կասկածիր, յաջողութիւն կու-
նենաս և կբաղդաւորուիս։ Որպէս
վարձատրութիւն քո արդարա-
սիրութեան՝ կը հարստանաս,
բայց մի առ ժամանակ յետոյ
կէսը կկորցնես մի վշտանար,
մնացածն էլ քեզ բաւական է
մինչև խորին ծերութեան, որին
դու պիտի հասնիս։

Ց Ո Ւ Լ Ն

Ո՛վ մարդ՝ կարելի է՞ քո բաղդն

երկու խօսքով ասել, բայց սիրտդ չկոտրելու համար ասեմ, որ դուր ես այդքան մտածում, գլուխ չի գայ. իսկ եթէ մի քիչ արդարասէր և համեստ լինես, կարելի է․ բաղդդ նորից քեզ դառնայ. այնուամենայնիւ ներկայ մտածմունքդ անիրագործելի է, և դու վնասից զատ ոչ մի օգուտ չես ունենայ նրան անձնատուր լինելով։



# ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ

1. Եթէ կանայք չեն ցանկանում որ իրենց կաթ կտրուի, անանուխ (պիտնայ) և սխտոր չպիտի ուտեն։

2. Յանկարծակի բռնած սանջուն կտրելու ամենալաւ միջոց․ տաք կոճը (զանջաֆիլ) ծեծիր և խառնիր մի բաժակ արաղի հետ ու խմիր, ցաւն իսկոյն կանցնի։

3 Կապոյտ հազի դեղը.—Կապոյտ հազով բռնուած երեխաների ոտի կրունկներին՝ գիշերները ծեծած սխտոր են քսում, որն շատ է օգնում։

13. Քորի դեղը.— Երեք պճեղ սխտոր կտաւտի ձէթով եռացրու, դիր թող սառի և ապա սառած ձէթը քսիր՝ քոր եկած տեղ կլաւանայ։

Լոյս տեսաւ եւ վաճառւում է

I

# ԷՓԻՄԵՐՏԷ

*հարուստ երազահանով եւ մի՛ ճակահաններով*

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ

II

# ԾԱՂՐԱԾՈՒ

Անեկդոտների ընդարձակ ժողովածու

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԷԿ

*Գումարով գնողներին զգալի զեղչ կարւի։ Դիմել Թիֆլիս, Հաւլաբար Խոջիվանքսկի ուլից. №. 16 Խ. Տէր-Յովհաննիսեանին կամ* Тифлисъ Авлаб. Ходживанкская ул. № 16, Х. Теръ-Оганесянцу

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
им. А. Мясникяна

## ԻՆՁ ՄՕՏ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

| | |
|---|---|
| Էֆիմերդէ . . . . . . | 70 |
| Ծաղրածու . . . . . . | 50 |
| Ծաղկեփունջ . . . . . | 50 |
| Ռազմի երգեր (մամուլի տակէ) | 40 |
| «ՅՈՅՍ» Օրացոյց 1916 թ. | 20 |

**ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.**

Այս գրքերի համար օտար տեղերից կարող են դիմել նաև Թիֆլիսի հայ գրավաճառներին ինձ. դիմել գումարով պահանջողներին զգալի զեղչ կարուի։ Իմ հասցէն՝
Тифлисъ, Ходживапкскій ул.
№ 16.

СССР
059
Z-95

6719

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0032288